№ 120 ՇԱԲԱԹ, 5 ՅՈՒՆԻՍԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 5 ՅՈՒՆԻՍԻ № 120

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տէլէֆօն № 253

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ
6 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նախ հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակադրոշմով)։

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Իլիա Միխայլովիչ և Սվէտլանա Ալէքսանդրովնա Թայիրեանները յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին՝ առաջինն իր ամուսնու և թանգագին ամուսնու, իսկ երկրորդն իր հօր՝

Ալէքսանդր Նիկիտիչ ԹԱՅԻՐԵԱՆԻ

մահվան մասին։ Յուղարկաւորութիւնը կիրակի, յունիսի 6-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի սեփական տնից (Վէլիկօկնեաժեսկայա № 53) դէպի հայոց ս. Աստուածածնի եկեղեցին (Միխայլովսկի պր., Վօրօնցովի արձանի մօտ)։ Թաղումը ուղղափառների գերեզմանատանը՝ Դիդուբէում, հանգուցեալի հայրենական դամբարանում։ Ամբիծքն այսօր, երեկոյեան ժամը 7-ին։

(ա. օ.) 695. 2—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ՏՈՒՆ Զուբալովի անուան

Երկուշաբթի, յունիսի 7-ին
Ժողովրդական Տան կից ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՏԱՅ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ
ԴԱՇՆԱԿԱՀԱՐ Յ. Գ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ մասնակցութեամբ եւ ղեկավարութեամբ
ՅՕԳՈՒՏ ԹԻՖԼԻՍԻ ԱՊԱԳԱՅ
Ժողովրդական Կօնսերվատորիայի Ֆօնդի
Սկիզբը երեկոյեան ժամը $8^1/_2$-ին։ Գները 5-ից մինչև 50 կոպէկ։
Կառավարիչ՝ Ֆ. Դ Օ Լ Ի Զ Է
(ա.օ.) առ. 696. 2—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
Զուբալովի անուան
ԺՈՂՈՎՐԴ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿ.
Հայկական սեկցիա
Շաբաթ, յունիսի 5-ին
Հայոց Դրամ. Ընկ. Թատերասէրների խումբը՝ մասնակցութեամբ դերասանների՝ կը ներկայացնէ Օստրովսկիի

„ԱՆՄԵՂ ՄԵՂԱՒՈՐՆԵՐ"

Կոմ. 4 գործ. Թարգմ. Առովմեանի։
Մասնակցում են—տ. տ. Զաբէլ, Մանուկեան, Յասմիկ, Վիրժինէ, օր. Մարգարիտ, պ. պ. Դաւիթ-Խան, Լազարեան, Հայկազեան, Մանուկեան, Փիրումեան և Սեւումեան։
Սկիզբն է ճիշդ $8^1/_2$ ժամին երեկոյեան։
Տեղերի գները 5—50 կոպէկ։
ԱԶԴ.—Հայկական սեկցիայի յաջորդ ներկայացումն է 17 յունիսի։ Տոմսակները վաճառվում են։
Ռեժիսսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
առ. 692. 1—1

Թիֆլիսի Ժողովարան
ԱՄԱՌԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆ
Այսօր, շաբաթ, յունիսի 5-ին
տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
Կօնցերտային-սիմֆօնիական նուագախումբ Ս. Ի. Պըէսմանի ղեկավարութեամբ։ Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 ր., կանայք 50 կ.։
Համերգի սկիզբը երեկ. ժամը 9-ին։
(առ.) 693. 1—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՌՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
8 կ. սկսած մինչև 6 ր. իւրաքանչիւր փաթեթը (րուլօ)։
Ունի պահեստներ Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում։
ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Գօլօվինսկի պր., 21, Արտիստ. Ընկ. շինութ.
Տէլէֆօն № 355.
ԳՆԵՐԸ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՁՐԻ
(հ.շ.) (ա.) 310. 50—22

ԲԺ. Ա. ՃԻԽԵԱՆ
արտասահման մեկնելով՝ ընդհատում է հիւանդների ընդունելութիւնը մինչև առաջիկայ սեպտեմբեր ամիսը։
(հ.շ.) առ. 680. 2—2

I ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ծննդաբերական բաժանմունքով
ԲԺ. Մ. ՄԿՐՏՉԵԱՆՑԻ
Բէբուտօվսկայա փող., 58.
Բաց է ամբողջ տարին։ Հիւանդները և ծննդկանները ընդունվում են ամեն ժամանակ, գիշեր և ցերեկ, վաղօրօք զեկուցանելով այդ մասին։
(հ. շ. ե.) առ. 685. 3—2

ԻՆՉՊԷՍ Է ԴՐՈՒԹԻՒՆԸ

Գարնան լուրերը մեր երկրի բերքի մասին շատ նպաստաւոր էին և մենք սննդում էինք մեր սրտերում մի ջերմ յոյս, որ այս տարի մեր տանջված գիւղացիութիւնը հնարաւորութիւն կունենայ բարուոքելու իր վիճակը մի որոշ աստիճանով և կը թօթափի իրանից հին պարտքերի մի մասը։

Այդ յոյսը դեռ չէ անհետացել, բայց վերջին ժամանակների յաճախ կրկնվող կարկուտը, հեղեղը և ուրիշ քայքայող դէպքեր զգալի վնասներ և կորուստներ են պատճառել մի երկրի շատ տեղերում։

Ճիշդ է, որքան էլ բազմաթիւ լինեն այդպիսի դէպքերը, այնուամենայնիւ նրանք, համեմատած ընդհանուր դրութեան հետ, դեռ ևս չեն նսեմացնում բերքի նպաստաւոր բնաւորութիւնը այնքան մեծ չափով, որ առիթ լինէր անմխիթարական ընդհանրացումների համար։ Բայց, անկասկած, եթէ աւերածները աւելի ևս ընդարձակ ծաւալ ստանան, այն ժամանակ մեր առաջ հանդէս կը գան ամբողջ շրջաններ փչացած բերքով և մեծ կորուստներով։

Մենք հաւատացի ենք, որ մեր գաւառական ինտելիգենտ անձերը ուշադիր կը լինեն դէպի գիւղական կարիքները և հոգ կը տանեն ժամանակին արձանագրելու բացասական դէպքերը, ընթացք տալու այն դիմումներին, որ պէտք է անել այս և այն հաստատութեան կամ առեանին, և առհասարակ միջոցներ մշակելու օգնութեան համար վնասված գիւղացիութեան։

Անցեալ 1909 թւականը թէև փոքր ի շատէ նպաստաւոր էր մեր գիւղացիութեան համար, բայց կարիքը դարձեալ շատ մեծ էր մեր երկրում, որովհետև նախկին տարիներից կուտակվել դիզվել էին մեծաքանակ և ծանր պարտքեր, որոնց վճարումը խլեց անցեալ տարվայ բերքի մեծագոյն մասը։

Գիւղական պարտքերը դեռ շատ մեծ են և ներկայումս։ Եւ անշուշտ այժմ էլ նոր բերքի մի պատկառելի մասը պէտք է գործադրվի հին պարտքերի շիջուցման։ Բայց եթէ սպասվող լաւ բերքը դուրս գայ անհաջող, այն ժամանակ կը ստեղծվի աւելի ևս ծանր դրութիւն, քան գոյութիւն ունի այժմ։

Կարևոր է պարբերաբար տեղեկութիւններ ունենալ մեր երկրի բերքի մասին, որպէսզի մեր կարիքի և պակասորդի աստիճանը յայտնի լինի ամենքիս և ժամանակ ու հնարաւորութիւն ունենանք հոգ տանելու կարիքի բաւարարութեան մասին։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարիզ, 3 յունիսի

Ֆօն-Կօտտէնի հաւատարմատար Լաբօրին մատնանշում է, որ վկաները չը յիշեցին և ոչ մի փաստ, որը կարողանար վարկաբեկել Ֆօն-Կօտտէնին։ Ազէֆի գործի առիթով Ստօլիպինի արտասանած ճառից առաջ բերելով քաղուածքներ, նա ապացուցանում է, որ Ֆօն-Կօտտէնը չէր կարող դրդել պրօվօկացիա անելու, որը կառավարութեան կողմից չէ թոյլատրվում։

Տէրրօրը մանաւանդ դատապարտելի է, ինչպէս Լաբօրին է ասում, ռուսաց պետական կեանքի նոր պայմաններում միայն։

Դատախազը իր ճառի մէջ համոզում է երդուեալներին, դատել միայն սպանութիւն կատարելու փորձի փաստը։ Ռիպսի պաշտպանը խնդրում է արդարացնել մեղադրվողին։ Երդուեալները անմեղ ճանաչեցին Ռիպսին։

Ֆօն-Կօտտէնը պաշտպանի խնդրանքով հրաժարվում է քաղաքացիական պահանջից, որին գոհացում տալով հարկ կը լինէր դատաստանական ծախքերը գցել Ռիպսի վրա։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 3 յունիսի

Ազնուականների կալուածական բանկի հիմնարկութեան 25-ամեակի լրանալու առիթով բանկի շինութեան մէջ կատարվեց մաղթանք ֆինանսների մինիստրի և վարչական անձերի ներկայութեամբ։ Կայսրը, ֆինանսների մինիստրի՝ բանկի գործունէութեան հետևանքների մասին արած ամենահպատակ զեկուցման ժամանակ, բարեհաճեց արտայայտել բանկի պաշտօնեաներին Իր Բարձրագոյն բարեհաճութիւնը։ (Հ. Գ.)

Լօնդօն, 3 յունիսի

Եկան 44 ռուս ուսուցիչներ ուսումնասիրելու դպրոցական գործը Լօնդօնում։ (Հ. Գ.)

Բերլին, 3 յունիսի

Լանդտագի նիստը փակված է։ (Հ. Գ.)

Հռօմ, 3 յունիսի

Պատգամաւորների պալատ։ Ծովային մինիստրութեան բիւջէն քննելու ժամանակ, ծովային մինիստր Լէօնարդին, մատնանշելով Իտալիայի արտաքին քաղաքականութեան խաղաղասիրութիւնը, յայտնեց, որ ծովային այժմեան ծրագիրը բաւարար է իտալական շահերը պաշտպանելու համար։ Մինիստրի ճառը հանդիպեց ջերմ համակրութեան։ Պալատը առանց ընդդիմախօսութիւնների ընդունեց ծովային մինիստրութեան բիւջէն։ (Հ. Գ.)

Մադրիդ, 3 յունիսի

Գահական ճառի մէջ խօսվում է Սպանիայի լօյալ համագործակցութեան մասին Ֆրանսիայի հետ։ Կառավարութիւնը կրօնական միութիւնները կը հպատակեցնէ դաշնակցութիւնների ընդհանուր օրէնքներին։ Վանքերը վերացնելու վերաբերմամբ Վատիկանի հետ վարած բանակցութիւնները կը շարունակվեն։ Կառավարութիւնը կողմնակից է ընդհանուր զինուորագրութեան։

Պարլամենտի բացումը կրում էր հանդիսաւոր բնոյթ։ Թագաւորը պարլամենտ եկաւ մայր-թագուհու հետ միասին։ (Հ. Գ.)

Լօնդօն, 3 յունիսի

Ռէյտերի գործակալութիւնը հաստատում է, որ առաջարկել է (՞վ) հովանաւորող-պետութիւններին Կրետէ ուղարկել նորից մի-մի զինուորական ռազմանաւ։ (Հ. Գ.)

Պարիզ, 3 յունիսի

Սպանիայից հաղորդում են, որ առաւօտեան մօտ ժամը 4 և կէսին զգացվեց երկրաշարժ շատ տեղերում։ Մադրիդում, Կօրդօվում, Տօրդօնում, Մալագում, Ալմէրիայում փչացած են մի քանի շինութիւններ։ (Հ. Գ.)

Սէրաեվօ, 3 յունիսի

Սէյմի նիստը բացվելիս՝ նախագահող փոխ-հանրապետ Սօլան գայրոյթ արտայայտեց նահանգապետ Վարէշանինի դէմ մահափորձ կատարելու առիթով։ (Հ. Գ.)

Սօֆիա, 3 յունիսի

Բօլգարական գործակալութեան տուած տեղեկութեան համաձայն, բօլգարական սլաւօնական ընկերութեան նախագահ Բօբչեվը յայտնում է, որ նա հեռագիրներ չէ ուղարկել սլաւօնական կուլտուրայի ընկերութեանը, առաջարկելով ուղարկել համագումարին եօթի փոխարէն մի պատգամաւոր։ Այդպիսով ճշմարիտ չէ այն պատճառաբանութիւնը, թէ Սօֆիայից ստացված հեռագրի շնորհիւ ընկերութիւնը որոշում է կայացրել չը մասնակցել համագումարին։ (Հ. Գ.)

Նիւ Եօրկ, 3 յունիսի

Կենտրոնական կառավարութեան կարգադրութեամբ կալանաւորված են անթել հեռագրի միացեալ ընկերութեան նախագահն ու փոխ-նախագահը, որոնք մեղադրվում են բաժնետէրերի վստահութիւնը ի չարը գործադրելու մէջ։ Երկուսն էլ զանազան հնարքներով բարձրացրել են ընկերութեան բաժինների բօրսային արժէքը և վաստակել 5 միլիօն դոլլար։ (Հ. Գ.)

Պէկին, 3 յունիսի

Գաւառական ներկայացուցչական ժողովների պատգամաւորները երկրորդ անգամ են դիմում արել խնդրելով կառավարութեանը պարլամենտ հրաւիրել։ (Հ. Գ.)

ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱԼԱՏՈՒՄ

Լօնդօն, 3 յունիսի

Համայնքների պալատ։ Գրէյը կրետական հարցի մասին խօսում է, որ մասնաւորապէս կրետական հարցը յարուցանում է ուրիշ ազգութիւնների մէջ աւելի մեծ կասկածամտութիւն, քան Անգլիայում։ Հովանաւորող պետութիւնների կողմից անցկացրած կրետական ինքնավարութիւնը, ներկայանում էր Թիւրքիայի համար իբրև երաշխիք, որպիսի պայմաններում անկարելի էր Կրետէն Յունաստանի հետ միացնելը. այժմ, երբ Թիւրքիայում հաստատված է նոր ռէժիմ, այս հարցի լուծումը առանց Թիւրքիայի մասնակցութեան անկարելի է։ Մասնաւորապէս պետութիւնները պիտի հսկեն, որ status quo-ն չը փոփոխվի Կրետէի վրա, կրետացիների կողմից վիրաւորական կերպով՝ Թիւրքական գերիշխող պետութեան համար։ Ժողովրդական ժողովի այն պահանջը, որպէսզի մուսուլմանների ներկայացուցիչները մուտք գործեն ժողովը երդումից յետոյ միայն, անպայման ներկայանում է որպէս խախտումն status quo-ի։ Գրէյը գիտէ, որ Կրետէի ձգտումը Յունաստանի հետ միանալու խնդրում շատ ուժեղ է, բայց նրանից պակաս ուժեղ չէ Թիւրքիայում տրամադրութիւնը Կրետէի միացման դէմ։ Գերմանական և աւստրիական լրագիրների հաւաստիացումները, թէ Անգլիան փոխեց իր դիրքը կրետական հարցում, սխալ են։ Պետութիւնները առանց Թիւրքիայի մասնակցութեան չէին սահմանի Կրետէի համար վերջնականապէս պետական որևէ ձև։ Այդ պատճառով վճռեցին թոյլ չը տալ status quo-ի փոփոխութիւնը, որը կարող էր սահմանափակել Թիւրքիայի գերիշխանութիւնը կամ մահմեդական փոքրամասնութեան իրաւունքները։ Իրեբի գրութեան համաձայն, Գրէյը յոյս ունի, որ Կրետէն կը հետևի հովանաւորող պետութիւնների խորհրդին և չի հարկադրի նրանց միջոցներ ձեռք առնելու՝ սահմանած պարտականութիւնները ի կատար ածելու համար։ (Հ. Գ.)

ՓՈԹՈՐԻԿՆԵՐ ԵՒ ՀԵՂԵՂՆԵՐ

Բէլգրադ, 3 յունիսի

Մօրաւա գետի հովիտում ընկած քաղաքներին և գիւղերին փոթորիկը մեծ վնասներ է հասցրել։ Սմէդերևոյից և Եագօդինից քաղաքները ամբողջովին ջրասոյզ են եղել։ Ջուրը հասնում է մինչև 3 մետր բարձրութեան։ Բնակիչները պատսպարված էին տանիքների վրա։ Գտնված է 38 դիակ։ Շատ գիւղերում բնակիչները առանց օթևանի են մնացել։ Շատ բնակիչներ քայքայվել են։ Ջուրը խեղդել է բազմաթիւ անասուններ։ Շատ տեղերում դաշտերը և բանջարանոցները ոչնչացել են։ (Հ. Գ.)

Բէլգրադ, 3 յունիսի

Հեղեղից առաջացած թշուառութիւնն ընդունել մեծ չափեր։ Սմէդերևոյի քաղաքը համարեա ամբողջովին ջրի տակն է, որ տեղ-տեղ հասնում է 4 մետրի։ Մօրաւայի հովտում շատ գիւղեր սուզվել են, շատերի մէջ փչացել է համարեա ամբողջ ցանքը։ Հաշուած ցուցմունքների ընդհանուր վնասն անցնում է 10 միլիօն ֆրանկից։ Թագաւորը և գահաժառանգը մինիստրների հետ շրջում են աղէտալի վայրերը։ (Հ. Գ.)

Սարատով, 3 յունիսի

Հանկարծ բարձրացած ջուրը քշեց տարաւ շոգենաւային [illegible] նաւամատոյցները [illegible] կառամատոյցների վրա ջրով տարաւ 30 մարդկանց [illegible]։ Ջուրը փորում է։ (Հ. Գ.)

Բեռն, 3 յունիսի

Հեղեղ սպառնացող տեղերում, համարեա ամեն տեղ, նկատվում է ջրի նուազում։ Ջրի բարձրանալը հասցրել է Լիւցեռնին, Շաֆհաուզենին և Բազելին։ Երկու Տուրգաու կանտոնում ջրի թափից քանդվել է պատնէշը։ Խեղդված են 5 հոգի։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Ուրմիա, 3 յունիսի

Քաղաքից 3 վերստ հեռաւորութեան վրայ գտնվող ասորական Սենդէր գիւղը, որ թաղված է վերջին ժամանակներս քրդերի ձեռքով յարձակման ենթարկված ասորիներին, քրդերը կոտրել են [illegible]։ Յարձակումը նախատեսված էր կարգի [illegible] և [illegible] ֆրանսիական միսիօնարութեան [illegible] թեմական իշխանութիւնը ոչ մի միջոցներ ձեռք չէ առնում։ Սենդէր գիւղը յամառ պաշտպանութեամբ զինվորված է։ Շրջակայ գիւղերից օգնութեան են գնում շատերը և [illegible] աղերսելիս։ Միայն ուշ երեկոյեան [illegible] կողմից ուղարկվեցին [illegible], որոնք, սակայն, չէին համարձակվում գործել։ Թիւրքերը գիշերը ետ նահանջեցին։ Սպառնում է նոր յարձակում։ (Հ. Գ.)

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պոլիս, 30 մայիսի

Համիդի բռնակալութեան տապալման մէջ առ հասարակ իր բոլոր ուժերի մէջ կազմվել էր Թիւրքիոյ մայրաքաղաքին մէջ, յունիսեան բռնակալութիւնը, ամբողջ բռնակալութեանց շատ ավելի է փտախտած։ Պոլիս այսպէս ասած ստորագաշնելի ինչ ավելի սահման է, որ ինչպէս գործել ստեղծագործութեան էր շնչին մէջ ընծայած։ Օրհնութեան փողոցի ամեն ժամ գիտութեամբ ինչ մեծ չեն ձոնած, ինչպէս ան իւրաքանչիւր քայլափոխին կը գտնէ անուցմէ քանիներ, պառկած՝ անցքին վրայ. և դու իրաւունք չունիս վրդովելու հանգիստը Համիդեան այդ առանձնաշնորհեալ էակներուն։ Եթէ, գէթ ինքզինքդ ազատելու համար, յանդգնութիւն ունեցած ես դաւազանդ փորձելու քուռսի մը գլխուն, իսկոյն վրայ կը հասնէր համիդեան ոստիկան մը, և ալ օձիքդ ձեռք անցուած էր։ Վա՜յ է եկեր քեզի. հարցաքննութիւն, ոստիկանական տեղեկագիր. և մինչև կը յաջողէիր ազատուիլ, հոգիդ բերանդ կուգար։

Շուներուն պաշտպանը միայն ոստիկանութիւնը չէր. իւրաքանչիւր Թիւրք իրեն ազգ. պարտականութիւն համարած էր հասնիլ անոնց օգնութեանը։ Փաթթոցաւորներուն քով առանձին հոգածութեան առարկայ էին անոնք։ Այդպէս՝ մեծապատիւ շուները, իրենց բռնակալութեան իբրև կեդրոն, որ անձեռնմխելի էր, ունէին Պէշիկթաշը, Համիդի գիւղը, որուն բարձունքին վրայ հաստատուած էր իր աքիսոտ բռնակալութիւնը։ Նոյնպէս շնային ինքնակալութեան էին յատկացուած կառավարական խոհանոցներու շուրջը գտնուող ազատ մասերը։

Հիմա ջախջախուելու վրայ է այդ բռնապետութիւնն ալ։ Սահմանադրական կառավարութիւնը որոշած է տապալել այդ վերջինն ալ, և կռիւը սկսած է արդէն քանի մը շաբաթէ ի վեր։ Համիդին պէս, այդ տապալուած բռնապետութեան ալ յատկացուած են արգելոցներ, միայն սա պայմանաւ որ այս վերջինը յաւէտ զրկուած պիտի ըլլայ իր տարփուհիներէն, իր գրգանուշ հարճերէն։ Կռիւը կը մղուի բուռն թափով. տրուած սաստիկ հրամանի մը վրայ՝ ոչ ոք իրաւունք պիտի ունենայ բերանը բանալ շնագգիները պաշտպանելու։

Կռիւը շրջանակային է. վարձկան կառաւորներու խումբեր յանկարծ ոտք կը դնեն թաղի մը մէջ, և ահա շուներու աղմուկն է, որ կը փրթի. երկաթէ օղակներ վարպետօրէն կը նետուին զոհերուն վիզը. կը պատահի, որ պոչը բռնուի, և իսկոյն քաշքշուք մը, ոռնոց մը, վշվշուք մը, և մեծադղորդ փախուստ մը ուրիշ շուներու, որոնք թշնամիէն շրջապատուած են, ամէն գիծերը արդէն կտրուած։ Թիւրքական թաղերու մէջ, այդ փախուստի րոպէին, շատերը ապաստան կը գտնեն հիւրընկալ տուներու մէջ, ու երբ գիշերը վրայ հասնի, շուները իշխած կըլլան իրենց տիրապետութեան գլխաւոր կէտերուն։ Հետևեալ օրը յայտնի կըլլայ դաւադրութիւնը կռուող ուժերուն դէմ։

Այս անգամ ռազմագիտութեան նոր ծրագիր. փոխանակ ցերեկ ատեն, աչքի լուսով ընելու յարձակումը, գիշերային մութով կը սկսի կռիւը. և ազդու հրաման մը թաղերու մէջ թէ ո՛ր տուն որ յանդգնի շնային բռնակալութեան մարտիկները պատսպարելու, իբրև կողմնակի վերջին բռնապետութեան, պիտի քաշուի նոր զինուորական ատեաններու առջև։ Հրամանը տպաւորիչ է. շնասիրական պաշտպանութիւնը կը դողդղայ այս անգամ երևակայուած կախաղանի սիւներու սարսափէն։

Շնասիրութեան մասին գաղափար մը ունենալու համար՝ պատմութիւն մը ընեմ։ Կըսուի թէ Ադանայի աղէտքի ատենը մահմեդական մը ուշադիր եղած էր, որ քած շուն մը, օրուան որոշ ժամերուն, կը մտնէր քանդուած, ջարդուած հայու մը տունը։

Օր մը՝ հետաքրքրութեամբ ներս կը մտնէ և կը տեսնէ, որ շունը կը ծծցնէ փոքրիկ մը իր օրօրոցին մէջ։ Կառնէ զանի և կուսակալին կը տանի այդ պատմութիւնովը, որ կը յիշեցնէ հռոմէական գայլին աւանդութիւնը։ Կուսակալը կը հրամայէ իսկոյն սուրի ծայրը նետել երախան։ Բայց տանող իսլամը, գուրգուրանքով մը, կըսէ, թէ երախան գեավուր չէ, քանի որ օրերով շուն մը դիեցուցած է զանի։

Կուսակալը մօրուքը կը քերէ։

— Լաւ խորհեցէք,—կըսէ իսլամը,—ճիշդ չէ՞ ըսածս։

— Ինչ որ է, ձեր գիտցածին պէս ըրէք։

Եթէ շունին կաթը այդքան տեղ ունի միտքերու մէջ, որքա՜ն աւելի մեծ տեղ ունենալու են շուները, անոնց ձագերը, շնային բռնապետութիւնը։

Որոշուած է անոր տապալումը, և թերևս ալբանական ապստամբութենէն առաջ Պօլիսը ազատուի այդ երկրորդ բռնապետութենէն։

Կատակը լուրջի փոխելով՝ պէտք է ըսել թէ հաւատացէք, որ մեծ յաջողութիւն մըն է աս, որ պէտք է ունենայ կառավարութիւնը մղուած միտքերու վրայ։ Ասկէ առաջ քանիցս այդպիսի միջոցներ ձեռք առնուած են, բայց խուժանին մոլեռանդութիւնը, սօֆթայական մեկնաբանութիւնները, բարեպաշտութեան երազները, որ խռոված են պալատին բարձրագոյն հոգևորականութիւնը, ամէն կողմէն եղած դիմումները, կախարդական հմայութիւնները միշտ յաջողած են կայսերական հրաման մը ձեռք բերել և իր դիրքին վրայ հաստատել շնական տիրապետութիւնը։

Եթէ ըլլայ որ այս օրերս պետական ձախողուածք մը տեղի ունենայ, կամ թէ փոթորիկ մը պայթի, կարկուտ իջնէ, կամ երկրաշարժի զօրեղ ցնցում մը վրայ հասնի, շնասիրական զգացումը ոտի կը կանգնի իր բոլոր ուժովը, սօֆթայական մեկնաբանութիւններ մէջտեղ կելլեն, և ամէն բան տակն ու վրայ կըլլայ ի պատիւ շնային իշխանութեան։ Բարեբաղդաբար՝ բնութեան բոլոր երևոյթները, ստորերկրեայ խաղաղութիւնը հաշտ են մեզի հետ։ Եթէ այս կռիւը սկսուած ըլլար Հալլէյի գիսաւորի սպառնալիքներէն առաջ, իսլամական բարեպաշտութիւնը մեծ փաստեր պիտի գտնէր անոր գթութիւն քարոզելու դէպի շուները։ Ստուգիւ, եթէ մեր այդ դրացի հայրենակիցները շուներու համար ունեցած գթութեան $1^0/_0$-ը գտնէին իրենց սրտին ու լանջին մէջ իրենց դրացի ուրիշ տարրերու մասին, երկիրը բարեբաղդ կըլլար, իրենք ալ մարդու կարգ կանցնէին։

Ինչ որ է, շնորհաւորելի է կառավարութիւնը իր ձեռք առած խիստ միջոցներուն համար։ Համիդեան բռնակալութեան չափ զօրութիւն մըն է, որու դէմ կը մարտնչի այսօր։

Յաջողութի՜ւն... Շաւէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԷՏՔ Է ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ

Նորերումս, մեր թեմի մէջ թեմական պատգամաւորների ընտրութիւնները կատարվելուց յետոյ, լոյս է տեսել ազգիս Վեհափառ Կաթողիկոսի հրամանով կազմված ու հրատարակված՝ «Ժամանակաւոր Հրահանգ Թեմական Ժողովի» վերնագրով կարգադրութիւնը։

Այս հրահանգով թեմական ժողով հանդիսանում է պարբերաբար գումարվող մի միայուն մարմին, որ վերին հսկողութեան, քննութեան ու ղեկավարութեան պարտք ու իրաւունքներ ունի իր թեմի եկեղեցական-դպրոցական կեանքի վերաբերմամբ։

Թեմական ժողովն (յօդ. 21) ընտրում է թեմի համար առաջնորդ, թեմական խորհրդի անդամներ, թեմական հոգևոր դպրոցի հոգաբարձուներ, թեմական վերստուգող յանձնաժողովի անդամներ։

Թեմական ժողովն է մշակում թեմական դպրոցների, եկ.-ծխ. դպրոցների, եկեղեցիների, վանքերի կալուածների շահագործման եղանակը։

Թեմական ժողովն է քննում ու հաստատում թեմական խորհրդի և թեմական դպրանոցի հոգաբարձութեան հաշիւները, նախահաշիւները, տեղեկագրերը ու զեկուցումները։

Թեմական ժողովն է քննում նաև թեմական առաջնորդի, թեմական խորհրդի և թեմական դպրոցի հոգաբարձութեան դէմ ծագած ծանր բողոքները։

Տողերիս գրողը առանձին հրճուանքով գալիս է իր անհուն ուրախութիւնը յայտնելու թեմական պատգամաւորական ժողովի հէնց այդ կերպարանքով, պարտք ու իրաւունքի այդ սահմաններով միայուն մարմին հանդիսանալու վերաբերութեամբ։

Կենտրոնական ժողովին նուիրած իմ մի շարք յօդուածներում «Մշակի» մէջ, ես ոչ միայն յայտնել ու շեշտել եմ այդպիսի մի մարմնի անհրաժեշտութիւնը, այլ և ցոյց եմ տուել, որ օրէնսդրական ճանապարհով հաստատուած Պոլօժենիէն իր մէջ շատ պարզ կերպով բովանդակում է այդպիսի մի ժողովի բոլոր հիմունքները։

Այսօր մեր ազգընտիր Հայրապետի հրամանով լոյս տեսած «Ժամանակաւոր Հրահանգը» գալիս է մեր թեմական կեանքի այդ խոշոր բացը ծածկելու։

Թեմական ժողովի հաստատութեամբ մեր ազգային եկեղեցական կեանքը ոտք է դընում վերակազմվելու, կարգաւորվելու, ամբողջանալու ուղիղ ճանապարհի վրայ։

Թողնելով «Ժամանակաւոր Հրահանգի» յօդուածների մասին խօսելը մի այլ անգամի, այսօր գալիս եմ մամուլի մէջ բարձրացնելու ձայնս ու առաջարկելու.—մինչև այժմ կատարված ընտրութիւնները մի կողմ դնել և նոր ընտրութիւններ կատարել։

Մեր թեմի մէջ ընտրվել են պատգամաւորներ գլխաւորապէս Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան կազմից հեռացող անդամների փոխանակ նորերը և թեմական խորհրդի անդամներ ընտրելու նպատակով։ Այն պատգամաւորների պարտք և իրաւունքի բնոյթը, սահմանները, այն թեմական պատգամաւորական ժողովի միայունութիւն ստանալը, սրա գործունէութեան ասպարէզը բոլորովին մի նորութիւն է մտցնում ընտրվածների պարտք և իրաւունքների մէջ. նորութիւն, որ բնաւ աչքի առաջ չէ ունեցել ընտրող ծխական ժողովը։

Բացի այն հանգամանքից, որ Վեհափառ Հայրապետի հրահանգը բոլորովին փոխում է արդէն ընտրված պատգամաւորների պարտք և իրաւունքի սահմանները, քան թէ դրված են նրանց իրանց ընտրող ծխականներից, այլ և ուղղակի մեծ մասամբ անվաւեր են այդ ընտրութիւնները, քանի որ սրանք չեն կատարվել նոր հրահանգի 16-դ յօդուածի պահանջի համաձայն։ Այս յօդուածն է. «Պատուիրակներ ու պատգամաւորներ ընտրելիս ծխական ժողովները ղեկավարվում են «Ծխական կանոնադրութեամբ»։ Հրահանգի այս պահանջը ոչ միայն յատուկ յօդուածի նիւթ է, այլ և դրված է չակերտների մէջ։

Ծխական կանոնադրութիւնը պահանջում է, որ առաջին ժողովի չը կայանալու դէպքում՝ հրաւիրվի երկրորդ ժողով, բայց այս երկրորդ ժողովը օրինաւոր է համարվում, երբ ներկայ են իրաւատէր ծխականների $^1/_{10}$ մասը, այլ ոչ թէ քանի հոգի էլ լինի։

Սա շատ էական պայման է։

Մեր վերջին ընտրութիւնները բնաւ չեն համապատասխանում Վեհ. Հայրապետի տուած նոր հրահանգի 16-րդ յօդուածին և թեմական ժողովի բնոյթին։

Ինձ թւում է, թէ նոր հրահանգը այնպիսի մի նոր ասպարէզ է բաց անում թեմական ժողովի առաջ, այնպիսի նոր պայմանների մէջ է դնում թեմական ժողովին, որ անհրաժեշտութիւն և օրինական պահանջ է առաջ բերում մեր թեմի մէջ մինչև այսօր կատարված պատգամաւորական բոլոր ընտրութիւնները քանդելու և նոր ընտրութիւններ նշանակելու։

Կարիք չը կայ շեշտելու, որ Վեհափառ Հայրապետի կողմից դրված պարտք ու իրաւունքները միայն նրանք կարող են կատարել ու գործադրել, որոնք ընտրված են նոյն Վեհ. Հայրապետի սահմանած կանոնների հարազատ պահպանութեամբ։

Յանուն մաքուր սկզբունքի, ի սէր մեր անկեալ վիճակի բարւոքման ազատվենք այն մեր գործած սխալների մեզ պարգևած դառնութիւններից և բռնենք լրջմտութեան ուղին. հասկացնենք մեր ժողովրդին այս նոր թեմական ժողովի կարևորութիւնը, ծանօթացնենք սրա կատարելիք պարտաւորութիւնների հետ, հետաքրքրենք ժողովրդին, հրաւիրենք սիրով գալ ժողովի և գիտակցաբար կատարել իր ընտրական պարտաւորութիւնը, որից կախված է իր ծխական կեանքի բարւոքումը։

Մեսրոպ ա.-ք. Մելեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Շուշի, 31 մայիսի

Քաղ. դումայի հերթական հարցերից մէկը քաղաքագլխի ընտրութեան հարցն է։ Անկասկած մեր քաղաքին հարկաւոր է խելքի, զգացմունքի և եռանդի տէր մարդ, որ կարողանայ ազատել քաղաքը վնասակար մարդկանց ազդեցութիւնից և նպաստել ամէն կերպ՝ յետամնաց քաղաքի ներքին բարեկարգութեան և այլն։

Եթէ Շուշու հասարակութիւնը ընդհանրապէս սառն է վերաբերվում դէպի քաղ. Դուման և առանձին յոյսեր նրա վրայ չէ դնում, դա պէտք է վերագրել այն բանին, որ այդ ինքնավարութեան ղեկավարները անցեալում անկարող և անընդունակ են եղել օգնութիւն առաջ բերել և քաղ. ինքնավարութեան պտուղները տալ քաղաքին։

«Մշակի» ներքին լուրերի բաժնում կարդացի, որ տեղիս քաղ. դուման քաղաքագլխի պաշտօնը առաջարկել է բժ. Ն. Նարամիշեանին։ Իրողութիւնը այս է. ամենացանկալի թեկնածուն Պետրոս Զաքարեանցն էր, բայց նա հրաժարվեց այդ պաշտօնից։ Այժմ մի նեղ շրջանում խօսվում է Նարամիշեանցի մասին. ի հարկէ ցանկալի էր անպայման, որ նա լինի, բայց տարաբաղդաբար ճնշող մեծամասնութիւնը մի երկու թուրք պաշտօնաթող ոստիկանի համար է խօսում։ Պօղ. Զաքարեան

Մերվ, 23 մայիսի

Մերվը վաճառականապէս զարգացած լինելով՝ ամէն կողմից ձգում է հայ ծառայող դասակարգը դէպի իրան։ Ներկայումս մեր քաղաքում գտնվում են պանդուխտ շատ հայ երիտասարդներ, որոնք առաւօտից մինչև երեկոյ արիւն-քրտինք են թափում, որպէս զի գոնէ կարողանան մէկ կտոր հացի փող գցել ձեռքները։ Գալիս են իրանց ծննդավայրերից դէպի օտարութիւն հաց աշխատելու նպատակով, բայց յետոյ ինչ ենք տեսնում։ Երեկոները գործից ազատվելուց յետոյ թափառում են փողոցից փողոց, առանց սէր ունենալու դէպի գրականութիւնը։ Դրա փոխարէն՝ նրանք իրանց ազատ ժամանակն սպանում են ամենավերջ խօսակցութեամբ, որովհետև տեղիս հայ գաղութի երիտասարդութիւնը, ցաւօք սրտի յայտնում եմ, մոռանալով իր թանգագին առողջութիւնը, գրաւված է կեղտոտ ու կործանիչ ճանապարհով։ Քանի անգամ մասնաւոր երիտասարդական ժողով եղաւ՝ ուշքի հրաւիրելու մոլորվածներին և ցոյց տալու, թէ ինչեր են կատարվում մեր ծննդավայրերում, բայց ի զուր։

Հայկական գիւղերում սովի դուռն է բացվում իրանց հարազատների առջև, բայց մեր քաղաքի հայ գործակատար երիտասարդութիւնը շռայլութիւնը այն աստիճանի է առաջացրել, որ մոռացել է ամեն սրբութիւն։

Տեղիս եկեղեցում մեր ծխատէր քահանան երբեմն յորդորում է երիտասարդութեանը վատ ճանապարհից թեքվելու դէպի լաւը, բայց երիտասարդութիւնը խուլ է և չէ լսում, որովհետև նա եկեղեցուց հեռու թափառում է զանազան գինետներում կամ այլ վատահամբաւ վայրերում։

Ո՞ւր է առաջնորդում հեշտանքների այդ ճանապարհը մեր երիտասարդութեանը։ Դէպի բաղդաւոր ու փայլուն ապագա՞ն։ Ո՛չ անշուշտ։ Ժամանակ է, որ մեր տարագիր երիտասարդութիւնն իրան հաշիւ տայ իր հայրենիքում թողած հարազատների և այստեղ կատարած իր տխուր սխրագործութիւնների մասին։ Ժամանակը կանգնի, փողը կը գնայ, և մէկ էլ տեսար՝ անփողութիւնն ու անբուժելի հիւանդութիւնն են մնացել քեզ ընկեր։ Պէտք է մտածել այդ մասին՝ քանի դեռ ուշ չէ։ Ա. Տ.-Զ.

Ս. Տ. Ա.-Ք. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Մենք արդէն հաղորդեցինք, թէ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան հեռացող անդամների փոխարէն նորերն ընտրելու համար Թիֆլիսի եկեղեցիներում մայիսի 30-ին կայացան պատուիրակների ընտրութիւններ, բացի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցուց, ուր ժողովականների փոքրամասնութիւնը սկանդալներ էր սարքել բացառապէս նպատակ ունենալով ընտրութիւնները խանգարելու։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ*)

Եվրոպական զարգացած լեզուների վրա մատնանշելը, նրանց անկարգ ու պակասաւոր ուղղագրութեամբ մեր ուղղագրութեան պակասութիւնն արդարացնելը և բարեփոխութեան կարիքը մերժելը՝ նորութիւն չէ հ. Մէնէվիշեանի կողմից։ Անցեալ յօդվածումս («Մշակ» № 96) ես արդէն նախատեսել էի, թէ հ. Մէնէվիշեանը, եթէ կամենայ գիտնականօրէն խօսել, պէտք է կրկնէ այն՝ ինչ որ ասել են կամ ասում են աւանդապահները։ Եվ յիրավի, ռուսաց ուղղագրութիւնը բարեփոխելու հարցում, որին պաշտպան են հանդիսանում ամենանշանաւոր գիտնականներ, մանկավարժական համաժողովներ, ամբողջ գիտութեան ակադեմիան՝ մի քանի աւանդապահներ հէնց հ. Մէնէվիշեանի նման առարկութիւններ էին բերում—ապա ինչու մեզանից շատ աւելի զարգացած ազգերը, ֆրանսիացիք, անգլիացիք եայլն մեզնից շատ աւելի դժվար և անկատար ուղղագրութիւն ունեն. ինչու նրանք չեն փոխում, այլ պահպանում են անփոփոխ, և միահամուռ ջանքով՝ աշակերտներին սովորեցնում են իրանց արդարև դժվար ուղղագրութիւնը։

Ահա ինչ է պատասխանում այսպիսի առարկութեան ակադեմիկոս Թ. Կորշը.

«Այստեղ ես լսեցի առարկութիւն, թէ ինչպէս է, որ Արևմուտքում ժողովրդական դպրոցներում կարճ ժամանակամիջոցում աջողում են կատարեալ գրագիտութիւն ձեռք բերել։ Սա բոլորովին ճիշդ չէ. գրագիտութիւն այնտեղ էլ ձեռք չեն բերում։ Ամենից աւելի գրագէտ ուղղագրութիւն նկատվում է սերբերի, բաւական գրագէտ ուղղագրութիւն՝ չեխերի ժողովրդական դպրոցներում. բայց սա բացատրվում է նրանով, որ սերբերի և չեխերի ուղղագրութիւնը հեշտ է և համապատասխան է կենդանի լեզվին. ճիշդ է, Գերմանիայում վերջին ժամանակներս դպրոցներում աջողեցին բաւարար գրագէտ գրութիւն ձեռք բերել. բայց այնտեղ երեխաները սկսում են սովորել 6 տարեկան հասակից և սովորում են 6—8 տարի. այն ինչ մեզ մօտ ուսումը տևում է 3—4 տարի։ Իսկ Ֆրանսիայում և Անգլիայում ուղղագրութեան ուսուցումը ժողովրդական դպրոցներում այնպիսի հետևանքների է հասցնում, որ երբ մարդ ձեռքն է առնում մի ռամիկ ֆրանսիացու կամ անգլիացու գրվածքը կարդալու՝ անկարելի է լինում մի բան հասկանալ, առանց բնագրի մանրակրկիտ քննադատութեան, և մեծ սրամտութիւն է հարկավոր՝ գլխի ընկնելու համար, թէ ինչ է կամենում ասել հեղինակը՝ գրերի տարօրինակ զուգադրութեամբ։ Նոր-յունարէնի ուղղագրութեան մասին խօսել անգամ չարժէ» *)։

Անգլիական ուղղագրութեան մասին ահա ինչ կարծիք են յայտնում հեղինակաւոր գիտնականները. «Ոչ մի տեղ սկզբնական գրագիտութիւնը այնպիսի դժվարութիւններ չէ հանդիպում՝ ինչպէս Անգլիայում, և սրան է վերագրվում զգալի չափով այն իրողութիւնը, որ անգրագէտ մարդկանց թիվը այնքան մեծ է Անգլիայում։ Գիտնական էլլիսը դառնապէս գանգատվում է, որ իր հայրենակիցները, միօրինակ ուղղագրութիւն ունենալու համար, չափազանց թանգ վճարեցին.—Նրանք կորցրին գիտակցութիւնը, թէ ինչպէս էին խօսում իրանց նախնիքը, ներկայումս զրկված են հնարաւորութիւնից՝ գրով արտայայտելու իրանց արդի արտասանութիւնը և անհամար դժվարութիւններ ստեղծեցին՝ իրանց լեզվով կարդացողների և գրողների համար։ Նշանաւոր լեզվաբան Վիլիամ Ջօնս, որ սանսկրիտ լեզվի ուսումնասիրութեան սկիզբը դրեց Եվրոպայում, նկատում է, թէ անգլիական ուղղագրութեան անկատարութիւնը հասնում է անհեթեթութեան և գրեթէ ծաղրելի է» *)։

Ֆրանսիական ուղղագրութեան վիճակը պերճախօս կերպով բացատրված ենք գտնում Ֆրանսիական մեծ էնցիկլօպեդիայի **) մէջ.—«Ֆրանսիական արդի ուղղագրութիւնը ոչ մի ընդհանուր կանոնի չէ ենթարկված. նա ո՛չ հնչական է, ոչ ստուգաբանական, ո՛չ համեմատական է և ոչ տրամաբանական։ Իր էութեամբ նա անկանոն է և կամայական։ Ինչ կողմից էլ նայելու լինենք՝ այդ ուղղագրութիւնը լի է դժվարութիւններով, և վաղուց է զգացվում նրա ռէֆօրմի կարիքը։ Մինիստրութեան նոր շրջաբերականները համալսարանի վարժապետներին՝ յանձնարարում է չը զբաղեցնել աշակերտներին ուղղագրական նուրբ կանոնների և բացառիկ կիրառութիւնների ուսումով։ Յիրաւի, ցաւալի է մտածել, թէ երեխաները որքան թանգագին ժամանակ, յաճախ մի քանի տարի, զոհում են մի անշնորհակալու և ապարդիւն ուսման։ Հէնց միայն այս տեսակէտից մեր ուղղագրութեան թեթևացումը ազգային բարիք կը լինէր։ Բայց աւելին կայ.—ուղղագրական՝ դժվարութիւնները դժվարացնում են ֆրանսերէնի ուսումը օտարազգիների համար և խանգարում են նրա տարածվելուն ուրիշ երկիրներում։ Մասամբ այդ դժվարութիւններին պէտք է վերագրել և այն երևոյթը, որ ֆրանսիական հին գաղութ Նոր-Օրլէանում անհետանում է ֆրանսերէնը, և դեռ ևս ֆրանսերէն խօսողների մեծ մասը չը գիտէ գրել և այլևս չէ գրում։ Մեր ուղղագրութեան ռէֆօրմը անպայման հայրենասիրական մի մեծ գործ կը լինէր». (եր. 618—19, համառօտած)։

Ահա համառօտ նկարագիրը այն ուղղագրութիւնների, որոնց օրինակին հետևել մեզ հրավիրում է հ. Մէնէվիշեանը։ Այդ ազգերը տառապում են իրանց այլանդակ, անհեթեթ ուղղագրութիւնից. այնքան խըրվել են նրա մէջ, որ դուրս գալը գրեթէ անկարելի է դարձել. չարունակ ճիգ են թափում մի ելք գտնել այս անել դրութիւնից, և անդադար թեթևացնում, հեշտացնում են նրան, որքան հանգամանքները ներում են,—և հ. Մէնէվիշեանը եվրոպական լեզուների այդ բացասական երևոյթը, այդ չարիքը մեզ իբրև օրինակ և ուղեցոյց է բերում։

Սակայն խոհուն մարդը այդ լեզուների ուղղագրութիւնից բոլորովին այլ բան պէտք է սովորի, այսինքն՝ թէ ի՛նչպէս չը պէտք է վարվել, թէ ինչպէս տարապայման հնավանդութիւնը մեզ, մեր խղճալի իրականութեան մէջ, դէպի այն խորխորատը կը տանի, որի մէջ ընկել են այսօր յոյները, ֆրանսիացիք, անգլիացիք և այլն և դուրս գալ չեն կարող։ Այս լեզուները փաստալից բողոքով մեզ ասում են.—«մի՛ գաք մեր շավղով, մեր դժբաղդութիւնը ձեզ խրատ լինի. փոփոխեցէք ձեր ուղղագրութիւնը հետզհետէ, կենդանի արտասանութեան յարմարեցրէք. որքան ուշանաք՝ այնքան կը դժվարանայ ձեր գործը»։

Սակայն եվրոպական լեզուների անկատար ուղղագրութեան դառն փորձը միայն չէ, որ մեզ պէտք է զգուշացնէ նրանց հետևելուց. կայ աւելի խոր, օրգանական, մեր լեզվի ուղղագրութեան յատկութիւնից բըղխող պատճառ։ Մեր լեզվի ուղղագրութեան հիմքը կազմում է հնչական սիստեմը, իսկ հ. Մէնէվիշեանի յիշած լեզուները՝ աւանդական ուղղագրութիւն են պահպանում, ոմանք լիակատար չափով, ոմանք մասամբ։ Երբ այսպէս տարբեր են մեր և նրանց լեզուների ուղղագրական սիստեմները՝ պարզ է որ սրանց զարգացումն էլ տարբեր ճանապարհներով պիտի ընթանայ։ Հնչական սիստեմ ունեցող լեզվի ուղղագրութեան բարեփոխումը պէտք է կատարվի և կարող է կատարվել միայն հնչական սիստեմով—«մի հնչիւնին մի գիր» սկզբունքով։ Հարիւրներով օրինակներ կարելի է բերել մեր լեզվից, ոչ միայն առանձին բառերի և բառամբերի, այլ նոյն իսկ ուղղագրական սիստեմների, ստուգաբանական ձևերի գրութեան նկատմամբ, որտեղ պարզ երևում է, թէ ինչպէս մեր լեզուն դարէ դար անդադար փոփոխել է իր ուղղագրութիւնը՝ միշտ հնչական սիստեմին հետևելով, ձգտելով որ բառի գրութիւնը և արտասանութիւնը միմեանց համապատասխանեն։ «Վ» հնչիւնի ուղղագրութեան մէջ դարերից ի վեր գոյութիւն ունեցող անհաստատութիւնը, բազմաթիւ հեղինակների փորձերը այս ուղղագրութիւնը այս կամ այն կերպ կանոնաւորելու (որը հ. Մէնէվիշեանը, առանց իրան հաշիվ տալու՝ յախուռն կերպով «այլոց արդէն ձախողապէս փորձած վանդալութիւն» է կոչում), աշակերտների և ուսուցիչների կրած չարչարանքը, որի համար հ. Մէնէվիշեանը ուրիշ միջոց չէ գտնում քան... պատժել ուսուցիչներին, ուինագրութեան տարածվելը, չը նայելով նրա սխալ հիմքին և վնասակար հետևանքներին՝—այս հանգամանքները՝ դիտող, երևոյթների պատճառները քննող մտքին պէտք է մի բան թելադրէին, այն է, որ հնչական ուղղագրութիւն ունեցող մեր լեզուն բողոքում է, չէ կարող մարսել վ-ի գրութեան աւանդական ուղղագրութիւնը (երեք գրութիւն՝ մի հնչիւնի համար), այլ պահանջում է վերածել նրան հնչական սիստեմի—«մի հնչիւնին մի գիր» սկզբունքին։ Եվ այն մարդիկ, որոնք աչք ունեն չը տեսնելու համար, ականջ ունեն չը լսելու համար, որոնք, հնավանդ ուղղագրութիւնը պահպանելու տենչով բռնված, կռվում են վեվագրութեան դէմ՝ ցոյց են տալիս, որ չեն ըմբռնում մեր լեզվի ոգին, չեն կարողանում թափանցել երևոյթների պատճառների մէջ, և «հնավանդութեան» սնանկացած աստծուն զոհ են բերում կենդանի լեզվի օրգանական կարիքները, կարդացողների և գրողների հեշտութիւնը, ուզում են կանգնեցնել լեզվի բնական զարգացումը — էվօլիւցիան։ Ես այսքան կասեմ. «խիստ է ձեզ ընդդէմ խթանի աքացել»։

---

*) Տես «Մշակ» № 119.

*) Протоколъ перваго засѣданія комиссіи по вопросу о русскомъ правописаніи, Պետերբուրգ, 1905, եր. 57—58։

*) Եա. Գրոտ, «Филол. раз»., եր. 194։

**) Grande encyclopédie, հտ. XXV, «Orthographe» բառի տակ։

Բայց որովհետև լոյսի նման պարզ իրողութեան նկարագրութիւնը գիտակցաբար խեղաթիւրված է այն թերթի կողմից, որ ակներև կերպով հովանաւորում է սկանդալներ սարքող այդ փոքրամասնութեանը, մենք ստորև հրատարակում ենք յիշեալ եկեղեցու աւագ-երէց Ստեփաննոս աւ.-ք. Սամուէլեանի յայտարարութիւնը՝ գրված մայիսի 30-ից՝ յանուն Վրաստանի և Իմերէթի թեմի առաջնորդ Գարեգին արքեպ. Սաթունեանի:

«Ամսիս 23-ին չը կայանալով մեր եկեղեցու ծխական ժողովը սահմանեալ թիւը լրացած չը լինելու պատճառով, նշանակվեց երկրորդ ժողով ամսիս 30-ին:

«Այսօր ժամը 12½-ին ծխ. ժողովը ես բացի և խնդրեցի ժողովականներից ընտրել նախագահ և քարտուղար. ժողովի մեծամասնութիւնը 58 ձայնով ինձ հրաւիրեց նախագահել, որոնք և ստորագրեցին արձանագրութեան թերթի վրա, իսկ փոքրամասնութիւնը ցանկանում էր Յ. Ամիրխանեանին: Չը նայելով ընտրութեան հետևանքին՝ կրկին երկար վիճաբանութիւններ սկսեց հակառակ կողմը իմ ընտրութեան դէմ: Թէր ու դէմ կարծիքներ յայտնելուց յետոյ վերջապէս համաձայնութիւն կայացրին և ես նախագահեցի ժողովին: Քարտուղար ընտրվեց Գարեգին Լևոնեանը:

«Նախագահի և քարտուղարի ընտրութիւնը գրեթէ 2 ժամ տևեց, և ժողովականների համաձայնութեամբ բոլոր ժամանակ եկեղեցու դռները փակ էին պահված, որպէսզի դրսի խաժամուժ ամբոխը ներս չը մտնի: Սակայն երբ կարգը հասաւ պատգամաւորների ընտրութեանը, փոքրամասնութիւն կազմող կուսակցութիւնը, տեսնելով որ ընտրութեան հետևանքը իրանց նպաստաւոր չը պիտի լինի, պահանջեց ինձանից, որ եկեղեցու դռները բացվեն և դրսի ժողովուրդը իրաւունք ունենայ ներս մտնելու:

«Մեծամասնութիւնը հակառակվեց, իսկ փոքրամասնութիւնը, ընտրութիւնը խանգարելու համար, սկսեց աղմուկ և կռիւ յարուցել: Ես զգուշացրի ժողովականներին՝ որ եթէ նրանք չը դադարեն և չը հաշտվեն երկուստեք դռները բանալու կամ փակ թողնելու խնդրում, կը փակեմ ժողովը: Փոքրամասնութեան նպատակն էր դրսից օտարներին օգնութիւն կանչել: Իմ յորդորը ազդեցութիւն չունեցաւ և հետզհետէ աղմուկը աւելի սաստկացաւ. ես ստիպվեցի փակել ժողովը յետաձգելով առաջիկայ կիրակի օրը, յունիսի 6-ին»:

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Սկանդալը «Նիջաթ» ընկերութեան մէջ

Մայիսի 28-ին Բագւում տեղի է ունեցել «Նիջաթ» ընկերութեան ընդհանուր ժողովը՝ նախագահութեամբ Իսկանդէր-բէգ Մելիքովի:

Ժողովի օրակարգն է եղել վերստուգիչ յանձնաժողովի և ընկերութեան անդամ Ախունդովի զեկուցումները, որը և առիթ է տուել մի տգեղ սկանդալի:

Զափազանց բնորոշ լինելով փաստը՝ մենք տալիս ենք համառօտ նկարագիրը՝ քաղելով «Баку» լրագրից:

Օր. Օրուջեվ կարդում է վերստուգիչ յանձնաժողովի զեկուցումը: Վերջինս մեղադրում է վարչութեանը անգործութեան համար, իսկ նրա նախագահ Աշուրբէգովին դիկտատօրութեան մէջ, իրան վերապահված իրաւունքներից շեղվելուն համար: Ընդհանուր ժողովներում նախագահը ճնշում է առանձին անդամների կարծիքները և նոյնիսկ սպառնում է նրանց: Այնուհետև զեկուցումը առաջ է բերում ուշագրաւ դէպքեր: Վարչութիւնը, օրինակ, որոշում է կայացնում՝ նկատողութիւն անել երեք դերասանի իրանց թոյլ տուած անկոռեկտ վարմունքների համար բեմի վրա: Նախագահ Աշուրբէգովը ընդհանուր ժողովում չէ կարդում վարչութեան այն զեկուցումը, ուր յիշված են այդ դերասանների անունները, այլ առաջարկում է պախարակումն յայտնել ընդհանրապէս: Մինչդեռ ստորագրութեան համար ընդհանուր ժողովին ներկայացնում է վարչութեան զեկուցումը, և այն անդամները, ի թիւս որոց նաև դերասանները, որոնց մասին խօսվում է զեկուցման մէջ, ստորագրում են նրան առանց իմանալու նրա բովանդակութիւնը:

Աշուրբէգով (յուզվելով).—Դա վերստուգիչ յանձնաժողովի գործը չէ: Ես ոչ ոքից չեմ վախենում, ինչ որ ուզում եմ, այն էլ անում եմ... Թող գրեն լրագիրների մէջ ևս. ես նրանցից էլ չեմ վախենում: Վերստուգիչ յանձնաժողով ես չեմ ճանաչում: Եւ նոյնիսկ առանց ընդհանուր ժողովի էլ կարող եմ եօլա գնալ:

Ս.-բ. Հաջինսկի.—Ես զարմանում եմ, թէ ինչո՞ւ է վարչութեան նախագահը խանգարում կարդալ զեկուցումը: Չէ՞ որ մենք պէտք է իմանանք, թէ ինչ է կատարվում այստեղ: Մի անգամ ընդ միշտ հարկաւոր է վերջ տալ այդ բանին: Այդ արդէն ընկերութիւն չէ, այլ Աստուած է իմանում թէ ինչ...

Բարձրանում է աղմուկ, գոռում-գոչում:

Ջէյնալօվը նկատողութիւն է անում ժողովի նախագահին, որ նա չէ կարողանում ժողովը վարել ինչպէս հարկն է:

Ախունդով.—Այն բոլորը, ինչ որ գրված է զեկուցման մէջ, կատարեալ ճշմարտութիւն է: Դուք, պ. Աշուրբէգով, անցած անգամ սպանութեան սպառնալիքի տակ ինձ ստիպեցիք լռել, երբ ես ուզում էի այստեղ մերկացնել կատարված զեղծումները: Ի՞նչ էք ուզում... Ախր սա ընկերութիւն է:

Աշուրբէգով.—Ես ոչ ոքի չեմ ճանաչում... Նորից յայտնում եմ, որ այստեղ գործելու եմ ես ինքս միայն: Թող ինձ ինքնակալ անուանեն: (Դիմելով Ախունդովին). Դուրս... դուրս այստեղից, «մերզավեց»... (քեօփայ օղլի)... Աղա, Աբդուլրրաշիդ (ծառան), հեռացրու սրան, թէ չէ՝ ես այս րօպէիս կը սպանեմ սրան... Իսկ դուք, մամուլի ներկայացուցիչներ, գրեցէք ինչ որ ուզում էք:

Սկսվում է իրարանցում, շփոթութիւն...

Աշուրբէգովը ուզում է յարձակվել Ախունդովի վրա, բայց չեն թողնում: Հէնց այդ միջոցին Աբդուլրրաշիդը (Աշուրբէգովի ծառան) դուրս է քաշում Ախունդովին փողոց և այնտեղ ծեծում...

Իսկոյն և եթ վերստուգիչ յանձնաժողովը դէմօնստրատիվ կերպով հրաժարական է տալիս իրան վերապահված լիազօրութիւններից, իսկ անդամներից մի քանիսը յայտարարում են, որ հեռանում են ընկերութիւնից:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ, ամսիս 3-ին, քաղաքային վարչութեան մէջ հանգցված են քաղաքային 3-րդ փոխառութեան օբլիգացիաները, 500,000 ր. գումարի, որոնք գրաւ էին դրված Մոսկվայի եղբ. Ժամհարեանների առևտրական տանը. բացի այդ՝ հանգցված են մասնաւոր անձերի մօտ գտնված 100,000 րուբլու օբլիգացիաներ:

◆ Ախալցխացի հայ-կաթոլիկների հովիւ Միքայէլ Վարցելեանի խնդիրը՝ որ վերաբերում էր նոյն քաղաքի Նորակառոյց ս. Յովհաննէս Մկրտչի եկեղեցուն նպաստ տալուն, եկեղեցու շինութիւնը աւարտելու համար, Բարձրագոյնս մերժված է:

◆ Թիֆլիս է ժամանել Ալէքսանդրօպօլի քաղաքագլուխ Յ. Փ. Տիգրանեանը, որը հրաժարվել էր քաղաքային խորհրդի նիստերից մէկում տեղի ունեցած կօնֆլիկտի պատճառով: Այժմս նա գիջելով քաղաքային վարչութեան խնդրանքին, յետ է վերցրել իր հրաժարականը:

◆ Յունիսի 3-ի գիշերը Թիֆլիսում յանկարծամահ եղաւ Թիֆլիսի նահանգական դատարանի հնագոյն անդամ՝ իսկական պետական խորհրդական Վարլամ Խ. Կուսիկեանը, որը 40 տարի շարունակ ծառայել է վերոյիշեալ պաշտօնում:

◆ Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը շնորհակալութեամբ ստացաւ երդուեալ-հաւատարմատար Արշակ Վարլամովիչ Կուսիկեանից 50 ր., ի յիշատակ իր հանգուցեալ հօր՝ Վարլամ Կուսիկեանի»:

◆ Կ. Հ. Բ. Ընկ. Խորհուրդը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Խորհուրդը ստացել է երդուեալ-հաւատարմ. Ար. Կուսիկեանից ի յիշատակ իր հանգուցեալ հօր՝ Վ. Կուսիկեանի 50 ր. յօգուտ Ընկեր. Որբանոցի, որի համար խորհուրդը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը»:

◆ Մի քանի ժամանակ առաջ «Հօրիզօն» թերթի մէջ տպվեց նկարագրութիւնը Երզրումում տեղի ունեցած մի քստմնելի դէպքի մասին, երբ կախաղան հանված Յաբէթի անշունչ դիակը ենթարկվեց անարգանքի և անարգողները գազանային հակումներ ցոյց տուին: Ապա նոյն «Հօրիզօն» թերթի մէջ տպվեց մի հեռագիր Երզրումից, որով հերքվում էր այդ լուրը և խոստացվում նամակով մանրամասն բացատրութիւն տալ: Այդ օրից անցել է աւելի քան մի ամիս և նամակը լոյս չը տեսաւ: Միւս կողմից, Կ. Պօլսի «La Turquie» ֆրանսիական թերթի մէջ նկարագրված է Յաբէթի դիակի վրա կատարված գազանութիւնները և թերթը անարգանքի սիւնին է գամում այդ գազանութիւնների հերոսներին:

◆ Երեքշաբթի, ամսիս 8 ին, նշանակված է տրամվայի վագօնների քննութիւնը, որը կատարելու է առանձին մի մասնաժողով, բաղկացած քաղաքային տեխնիկներ Սիմօնովսկիից, Նալբանդեանից և Կօզնօվսկիից:

◆ Քաղաքային սպանդանոցի կառուցման վրա հսկող դումայական մասնաժողովը որոշել է մասնաժողովի համար առանձին նախագահ չը հրաւիրել, այլ խնդրել քաղաքային վարչութեանը վերոյիշեալ մասնաժողովի նախագահութիւնը յանձնել Ա. Ի. Խատիսեանին:

◆ Յունիսի 2-ին կայացաւ դումայական մասնաժողովի նիստը, մասնակցութեամբ տրամվայի դիրեկտօրի: Նիստում որոշված է հիմնել մի քանի նոր կանգնատեղիներ և հիմնել այսպէս կոչված ֆակուլտատիվ կէտեր: Վերջին կէտերի վրա վագօնները կանգ կառնեն միայն այն ժամանակ, երբ նստելու կամ իջնելու ցանկացողներ կը լինեն:

◆ Հալաբարի Էջմիածնեցոց եկեղեցու Մարիամեան օր. դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ նա շնորհակալութիւն է յայտնում հանգուցեալ Կարապետ Վարդանեանի ժառանգներին, յօգուտ դպրոցի նուիրած 100 րուբլու համար:

◆ Յունիսի 3-ին, առաւօտեան ժամը 9-ին, 12-րդ քաղաքամասի ոստիկանութիւնը տեղեկութիւն ստացաւ, որ Միխայիլ անունով մէկը, որը 1908 թ. աքսորված էր ոստիկանութեան հսկողութեան տակ Խարկով և որը առաջ բանտ էր նստած զանազան յանցանքների համար, ինքնակամ վերադարձաւ Խարկովից մի քանի շաբաթ առաջ և իր ընկերների հետ կողոպտեց Բօրչալուի գաւառի Եկատերինոֆէլդ կօլօնիայում մի հրէայի, որից խլեց 3200 ր., և որ այժմ ապրում է Թիֆլիսում, Մալականսկայա փողոցում: Միջոցներ ձեռք առնվեցին ձերբակալելու նրան, և նոյն փողոցի № 14 տանը ձերբակալեցին նրան, որը իրան անուանեց Միքայէլ Հայրապետեան Ստեփանեան, Նախիջևանի գաւառի Արազի գիւղացի, և ընդմին յայտնեց, որ իսկապէս փախել է Խարկովից և ներկայացրեց կեղծ անցագիր: Նրա մօտ գտնվեցին մի քանի թանգարժէք իրեր և դրամով 25 րուբլի:

◆ Յունիսի 3-ին, Լազարեվսկայա փողոցում ապրող Համազասպ Ապրեսեանը, 19 տարեկան, Բուսաբանական այգում ընդունեց կարբօլեան թթւուտ, ինքնասպանութիւն գործելու նպատակով, սիրահարական հողի վրա:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Մենք հաղորդել էինք, որ յունիսի 1-ին, Վրաց թատրոնում տեղի է ունենալու փորձնական ներկայացում:

Այդ ներկայացումը տեղի ունեցաւ, որը յատկապէս կազմակերպված էր մի քանի նորընծայ դերասաններին փորձելու համար, որի մէջ մասնակցողները, թւով 9 մարդ, բոլորն էլ նոր ուժեր են:

Խաղացվեցին երեք պիէսներից հետևեալ գործողութիւնները. «Մինչև արևածագը», Հաուպտմանի, 5-դ գործ., «Հարևանները», Տ. Րամիշվիլիի, 4-դ գործ., և Գունիայի «Անձրևից ազատվեցինք, կրակի մէջ ընկանք», 2-դ գործ.: Ներկայացմանը ներկայ էին տեղական մամուլի ներկայացուցիչներ և վրացի հասարակական գործիչներ:

Ներկայացումը կազմակերպել էր Վրաց Դրամատիկական Ընկերութեան վարչութիւնը: Ներկայացումը ընդհանուր առմամբ նպաստաւոր տպաւորութիւն գործեց ներկայ գտնվողների վրա: Ինչ ասել կուզի, որ մի անգամ տեսնելով չէ կարելի վերջնականապէս նոր ուժերի մասին բացասական կամ դրական կարծիք յայտնել, դրա համար էլ մենք ձեռնպահ ենք մնում:

Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

II*)

Անցեալ տարի լոյս տեսած իմ բրօշիւրի («Աշխատանքի և աշխատաւորի գաղափարը Աղա-Նեգրիի, Յակոբեանի և Կուրղինեանի բանաստեղծութիւնների մէջ» վերնագրով) վերաբերեալ լոյս տեսան մի քանի թէր և դէմ գրախօսականներ «Մշակ», «Հօրիզօն» և «Тифл. Листокъ» թերթերում:

Ինձնից անկախ պայմանների պատճառով, որոնց մասին յայտարարվեց այս էջերում («Մշակ» № 81), ես հիմա միայն հնարաւորութիւն ունեցայ արտայայտվելու: Լաւ է ուշ, քան երբեք:

«Քննադատութեան քննադատութիւն» («Մշակ» №№ 240, 241, 1909 թ.) Credo-ի, «Ինչպէս են գրվում մեզանում րեցենզիաները» («Մշակ» № 26, 1910 թ.) Ալ. Մեսնիկեանի, «Библіографія» («Тифл. Лист.» № 90, 1910 թ.) И. П.-ի, «Մի մոլորութիւն» («Հօրիզօն» № 71, 1910 թ.) Սիմ. Բաբիեանի:

Ահա բրօշիւրիս մասին գրված մատենախօսականները:

Ես չը պիտի խօսեմ Մեսնիկեանի յօդուածի մասին, որովհետև դա ինձ չէ վերաբերում, այլ մի պատասխան է (իր շատ մասերում բաւական աջող) Credo-ի դէմ, և այն կէտերը, որոնք շօշափվել են նրա մերկացնող պատասխանի մէջ, ես պիտի անուշադիր թողնեմ այստեղ՝ կրկնութիւնից խուսափելու համար:

Չը պիտի խօսեմ նաև И. П.-ի գրածի մասին, որովհետև դա բովանդակութեան վերաբերող մի պարզ գրախօսութիւն է: Բայց И. П. խօշոր թիւրիմացութեան մէջ է, սխալմամբ գրքոյկիս առաջաբանը վերագրելով ինձ և նրա խօսքերը դնելով իմ բերանը, մինչդեռ «Հրատարակիչ» ստորագրութիւնից նա պարզ պիտի նկատէր, որ դա այլ մարդ է, նստած Նոր-Նախիջևանում: Կոպիտ սխալ է նաև նրա կողմից, չը գիտենք որտեղից ենթադրելով, որ ես «գիտակցաբար արհամարհում եմ զուտ գեղարուեստական տեսակէտը». մի բան, որ չը կայ նոյն իսկ ինձ վերագրվող առաջաբանում: Եթէ ես շօշափել եմ բանաստեղծական արտադրութիւնների միայն գաղափարային կողմը, դա չէ նշանակում, որ արհամարհել եմ գեղարուեստականը:

Խօսեմ Credo-ի «քննադատութեան» մասին:

Ամբողջ երկու համարի նիւթ է մատակարարել նա «Մշակում»: Դա ոչ սովորական րեցենզիա է և ոչ էլ գրախօսական քննադատութիւն, այլ յուզված սրտից բըղխած անսովոր պրօկուրատուրային մեղադրանքներ Կուրղինեանի դէմ և փաստաբանական տաք-տաք ճառեր յօգուտ Յակոբեանի: Կատարելով երկու հակադիր դերեր միաժամանակ և միևնոյն թափով, Credo-ն հետևողականօրէն չէ գլացել այն բոլոր «լօվկի» մանիպուլացիաների, միտումնաւոր կոմբինացիաների և աչքակապութիւնների մէջ, որոնք կազմում են անհրաժեշտ բաղադրիչ տարրերը փաստաբանի և դատախազի գործնական արուեստի: Ու այդ բոլորը առաքինութիւն է ունեցել նա ամփոփելու «Քննադատութեան քննադատութիւն» անգթաբար շահագործված վերնագրի տակ:

Մի երկ քննադատելու համար, կրիտիկայի պարտադիր կանոնը պահանջում է, որ քննադատը համառօտապէս յիշատակէ երկի բովանդակութիւնը, մանաւանդ այն կէտերը լրութեամբ, որոնք քննադատվում են: Իսկ քննադատութիւնը քննադատելու համար պահանջվում է կրկնակին. և՛ այն՝ ինչ հեղինակն է գրում, և՛ այն՝ ինչ քըն-

---

*) Տես «Մշակ» № 119.

Հ. Մէնէվիշեանը իր յօդվածի երկրորդ մասում նպատակ է դրել՝ «ամենեն դիւրին ուղղագրական կանոններու տեղ՝ ամենադժուարին օրէնքներ ստեղծելով՝ հայերէնը խաթարողներու աչքը բանալ»: Այս ճոռոմաբան-բանաստեղծական արտայայտութեամբ, եթէ չեմ սխալվում, հ. Մէնէվիշեանը կամենում է ասել, թէ «Վ»-ի աւանդական ուղղագրութեան կանոնը «ամենէն դիւրինն է», իսկ նրա փոխարէն մեր առաջարկած վեվագրութիւնը «ամենադժուարին օրէնք է»: (Եթէ ես սխալ եմ բացատրում նրա վերևի խօսքերը՝ ապա հ. Մէնէվիշեանը թող իրան մեղադրէ, որ չէ կարող իր ասելիքը պարզ արտայայտել, այնպէս որ ամենին հասկանալի լինի և թիւրիմացութեան տեղիք չը տայ):

Այս նպատակով հ. Մէնէվիշեանը սկսում է բացատրել «Վ»-ի աւանդական ուղղագրութեան կանօնները, կամ, ինչպէս ինքն է արտայայտում գիտնականի ոճով, «վ-ի և ւ-ի կանօնները խօսեցնում է»*): Այս կանօնները նա բերում է հինգ կէտով («Վ» հնչիւնի գրութիւնը ւ-ով՝ ա, ե, ի ձայնաւորներից յետոյ, վ-ով՝ ո ձայնաւորից յետոյ, ու-ով. ը ձայնաւորից յետոյ) և մի ծանօթութեամբ (բարդ և ածանցված բառերի ուղղագրութիւնը՝ երբ բարդութեան երկրորդ մասը Վ հնչիւնով է սկսվում):

Այս կանօնների նկատմամբ պէտք է ասեմ, որ նրանք թերի են և չեն սպառում վ-ի և ւ-ի գրութեան բոլոր դէպքերը: Հ. Մէնէվիշեանը որոշել է «Վ» հնչիւնի գրութիւնը՝ ձայնաւորներից յետոյ. իսկ ի՞նչպէս է գրվելու այդ հնչիւնը ձայնաւորներից առաջ և բառի սկզբում՝ ոչ մի բառ չէ ասել. ի՞նչպէս պէտք է գրել va, ve, vi, vo, vou, vl, vn, vs և այլն, եթէ սրանք պատահեն բառասկզբում, կամ բառամիջում ձայնաւորից առաջ, այս մասին նրա կանօնները ոչինչ չեն ասում:

Եվ սակայն այդ թերի կանօնները ներկայացնում են ուղղագրութեան համար մեծ դժվարութիւններ.—Նրանցով ուղիղ գրելու համար՝ մարդ պէտք է նախապէս գիտենայ բառի ստուգաբանութիւնը, պէտք է որոշէ՝ արդեօք բառը բարդ կամ ածանցված է, թէ պարզ է. մի դէպքում մի կերպ պէտք է գրէ, երկրորդ դէպքում ուրիշ կերպ. (օր. պէտք է գրէ նաւավար, քաղցրավէն, որովհետև վարել, վէն բառերից են, բայց մեծաւոր, բնաւէն, որովհետև աւոր և բնաւ բառերից են): Պահանջել փոքր աշակերտից կամ հասարակ գրողից այսպիսի նախապատրաստութիւն՝ անկարելի է, և ուղղագրութիւնը այսպիսի պայմանների ենթարկելը՝ հազիվ թէ գործնական և խելացի լինի: Բայց հարցը բարդանում է նրանով, որ ոչ միայն աշակերտը, այլ սովորած մարդն էլ, գիտնականն էլ երբեմն պէտք է շվարի «Վ»-ի ուղղագրութեան առաջ, կամ որովհետև բառի ստուգաբանութիւնը յայտնի չէ, կամ որովհետև զանազան ձևով կարող է ստուգաբանվել: Մովսէս Խորենացին գրել է Երուանդաւան (ստուգաբանելով Երվանդ և վանել բառերով). և ո՞վ կարող է ասել, թէ նա սխալվել է կամ ոչ. Ի՞նչպէս պէտք է գրենք.—Նորավա՞ն թէ Նորաւան, երիվա՞ր թէ երիւար, նախավա՞ր թէ նախաւար, իջեվա՞ն թէ իջեւան, Երևա՞ն թէ Երեւան, անվանելի՞ թէ անուանելի և այլն*):

«Ըվ» հնչիւնի գրութիւնը հ. Մէնէվիշեանը կոչում է «գայթակղութեան քար, որուն կը զարնուին և կը փշրուին՝ թէ ռուսահայ ուսանողներն՝ որչափ կերևայ և թէ ռուսահայ վարժապետներէն շատերը»: Այս գայթակղութեան քարին զարկվել է դժբաղդաբար և ինքը հ. Մէնէվիշեանը՝ շատ ծախողակի կերպով բացատրելով նրա ուղղագրութիւնը: Ըստ հ. Մէնէվիշեանի՝ «հայերէն լեզուն այս հնչման (ըվ) ունի ու ձևը, որ միշտ ու կը կարդացուի երբ իրեն ձայնաւոր գիր մը հետեւի, իսկ ու (ւ) կը կարդացուի երբ առանձին է կամ բաղաձայն գիր մը հետեւի»: Առաջին մասը ճիշդ չէ ոչ գիտնականօրէն, քանի որ սկզբնապէս «ըվ» հնչիւնի արտայայտութիւն չէ եղել ու=v գրութիւնը. ճիշդ չէ և գործնականօրէն, քանի որ մենք սրուակ, Աղուանք, ալէլուիա և այլն բառերը չենք հնչում, ինչպէս հ. Մէնէվիշեանը կարծում է, «սըր-ըվակ, աղ-ըվանք, ալէլ-ըվիա, այլ սըր-վակ, աղ-վանք, ալէլու-իա, առանց նախընթաց ը ձայնաւորի: Երկրորդ մասն էլ թերութիւն ունի, քանի որ մենք ունենք «Դունայ», «տունջեան» գրութիւնները, որոնց մէջ ու-ն վ է կարդացվում, չը նայելով որ նրան «բաղաձայն գիր մը կը հետեւի»:

Ահա այս թերի, ստուգաբանական նախապատրաստութիւն պահանջող, թիւրիմացութիւններով լի, անհետևողական, խառնափնթոր ու դժվար ուղղագրութիւնն է, որ հ. Մէնէվիշեանը կոչել է «ամենէն դիւրին ուղղագրական կանոններ»: Իսկ որո՞նք են այն «ամենադժուարին օրէնքները», որ մենք ստեղծում ենք, որով և խաթարում ենք այդ «ամենէն դիւրին կանօնները»: Հ. Մէնէվիշեանը խուսափել է այդ ամենադժվարին օրէնքները բերելուց՝ իր ամենէն դիւրին կանօնների հետ համեմատելու համար: Բայց նա, եթէ կամենում էր բարեխիղճ հակառակորդ լինել, պարտավոր էր բերել: Նրա պարտավորութիւնը ահա ես եմ կատարում.

1) «Ամեն անգամ երբ Վ էք լսում՝ վ գրեցէք»:

2) «Բառասկզբում ո-ից առաջ վ մի գրեք, բացի վոհմակ բառից և Վոսփոր, Վոնոն անուններից*):

3) Եվ հնչիւնը կարելի է գրել նոյնպէս «և» գրով*):

Ի՞նչպէս պէտք է որակել հ. Մէնէվիշեանի վարմունքը, որ Վ հնչիւնի աւանդական գրութեան բազմաթիվ խառն կանօնները կոչում է «ամենէն դիւրին», իսկ վեվագրութեան միակ պարզ կանօնը կոչում է «ամենադժուարին օրէնքներ»—ես լռում եմ ասել: Բայց կարծում եմ, որ հ. Մէնէվիշեանը իրավունք չունի իր ընթերցողներին այդ աստիճան արհամարհել, կարծելով որ ինքը կարող է լոկ բառերով սքողել նրանց աչքից ակներև ճշմարտութիւնը: Կարելի է պաշտպանել հին ուղղագրութիւնը՝ իբրև «նախնեաց աւանդ», կարելի է կռվել վեվագրութեան դէմ իբրև նորամուծութեան դէմ. բայց չէ կարելի գիտակցաբար մեղանչել ճշմարտութեան դէմ: Եվ դեռ հ. Մէնէվիշեանը իրան թոյլ է տալիս՝ ուրիշներին տեղի-անտեղի սոփեստ կոչել:

Հ. Մէնէվիշեանը իր յօդվածի վերջաբանում կարծիք է յայտնում և ուինագրութեան մասին: «Անկողմնակալ կերպով եթէ մեր կարծիքն հարցուի,—ասում է նա,—թէ ո՛ր գրութիւնն աւելի նուազ կը մեղանչէ հայերէնի կանոնաւոր ուղղագրութեան դէմ, Աղայեանի գրութիւնը թէ Մալխասեանինը, չենք վարանիր ըսելու «Յերկուց չարեաց փոքրագոյնն է ընտրելի», այսինքն քանի որ հայերէնը կազմող 5 ձայնաւորներէն երեք միշտ ւ կանոնն իրենցմէ ետքը, նուազագոյն չարիք նկատելու է Աղայեան գրութիւնը և բացէ ի բաց դատապարտել Մալխասեան գրութիւնը»:

Այս խօսքերից երևում է, որ 1) հ. Մէնէվիշեանը ուղղագրական խնդիրներ վճռելիս ուրիշ ոչ մի առաջնորդող սկզբունք, կրիտերիում չունի՝ «քան աւանդական» ուղղագրութեան հետևելը, որը նա կոչում է «կանոնաւոր ուղղագրութիւն», չը նայելով նրա անհեթեթութիւններին ու դժվարութիւններին. 2) որ հ. Մէնէվիշեանը ուինագրութեան և վեվագրութեան հարցը վճռում է՝ արշինով կամ կշեռքով չափելով, մանրավաճառի նման (երեքը շատ է քան երկուսը, ուրեմն երեքի կողմն է անցնում), առանց որևէ գիտական սկզբունքի կամ գործնական յարմարութեան նկատումի. 3) որ հ. Մէնէվիշեանը մինչև այժմ էլ դեռ չէ հասկացել, թէ ինչ վտանգներ առաջ կը գան և արդէն առաջ են եկել ուինագրութիւնից, որոնցից մեր ուղղագրութիւնը փրկելու նպատակով հանդէս բերվեց վեվագրութիւնը:

Եվ սա կոչվում է «գիտնականօրէն խօսիլ»:

Ստ. Մալխասեանց

---

*) Հ. Մէնէվիշեանը այնքան միամիտ է, որ կարծում է թէ այդ կանօնները մենք չը գիտենք և կարիք ունենք իրանից սովորելու: Մենք գիտենք, բայց չենք ուզում գործածել՝ իբրև ավելորդ դժվարութիւններ պատճառող, անհիմն, թիւրիմացութիւնների տեղիք տվող և մեր լեզվի հնչական ուղղագրական սիստեմին հակասող կանօններ:

*) Ավելորդ բանակռիվների տեղիք չը տալու համար հէնց այստեղ կը պատասխանեմ այն առարկութեան, որ կարող են անել վեվագրութեան հակառակորդները. թէ վ-ով և ւ-ով գրութիւնը պէտք է պահպանել, որպէսզի «նախավար և նախաւար», «անվանելի և անուանելի» և այլն բառերի տարբեր նշանակութիւնները հասկանալի դառնան՝ տարբեր ուղղագրութեամբ: Նախ՝ գրութեան այդ տարբերութիւնը գոյութիւն չի ունենայ ապագայում և ուինագրութեան սիստեմով, որ մեր մէջ կընդհանրանայ՝ եթէ վեվագրութիւնը նրան չը խափանէ. ուինագրութեամբ էլ այդպիսի տարբեր նշանակութեամբ բառերը միօրինակ ձևով կը գրվեն (ինչպէս այժմ շատերից գրվում են) նախաւար, անուանելի և այլն: Երկրորդ՝ շատ հարիւրներով բառեր կան մեր լեզվի մէջ, որոնք բոլորովին տարբեր ծագում և նշանակութիւն ունեն, բայց բոլորովին նման գրութիւն. օր. անուր (անիվ և անել). արուր (արու և անել). ածուր (ածու և ածել). տարի (ամ և տանել). հացի (հաց և ծառ). տանիք (կտուր և տանել). ելից (ելք, ելանել և լնուլ). կացին (կալ և տապար) և այլ հարիւրաւորներ: Սրանց միանման գրութիւնը մեզ չէ խանգարում խօսքի իմաստից հասկանալ նրանց տարբեր նշանակութիւնները: Նոյնպէս կարելի է գործածել նման գրութեամբ տարբեր նշանակութիւն ունեցող «նախաւար», «անուանելի» և այլն բառերը, որոնց նշանակութիւնը խօսքի իմաստից միշտ կը հասկացվի:

*) Այս կանօնը հ. Մէնէվիշեանն էլ պարտավոր էր ավելացնել իր բազմաթիվ կանօնների վրա, բայց մոռացել է:

նադատն է ասում հեղինակի երկի մասին. ապա միայն առաջ բերել իր՝ այսինքն քննադատուեթեան քննադատի արգումենտները։ Կարճ՝ պէտք է նախ գաղափար տալ ընթերցողին հակառակորդի մասին եւ ապա գրել նրա դէմ։

Credo-ն իրան միայն հասկանալի և ձեռնտու մոտիվներով գերադասել է արհամարհելու մէկի թէ միւսի պարտականութիւնը։

Այդպէս է թելադրել նրա հասկացած բարեխղճութիւնը քննադատութեան հողի վրա։

Առաջին իսկ սիւնակում պարոնը կրտուկ կերպով հրաժարվում է «կանգ առնել» Ադա-Նեգրիի և Յակոբեանի «նորագոյն գրականութեան մէջ ունեցած դերի և աշխարհահայեացքի վրա»։ Նա անմիջապէս անցնում է Կուրղինեանին, բայց վերջինիս, ինչպէս կը տեսնենք, նա չէ յիշում մի ոտանաւոր, գէթ մի կտոր նրա երկից, որ իր ներքին գաղափարային յօրինուածքով վերաբերվէր մեր թեմային։

Համաձայն իր բանաստեղծական հիւսուածքների լայտ-մոտիվի, մենք Ադա-Նեգրիին անուանել ենք «աշխատանքի երգիչ»։ Իսկ իր հասարակական դաւանանքով բնորոշել ենք նրան որպէս «մանր-բուրժուական, զգայուն իդէալիստ և առաջադէմ դեմոկրատ», որ «փափագում է համայն աշխատաւորութեան փրկված, բարեբաստիկ վիճակը»։ Մեր այս բնորոշումը ապացուցել ենք իտալացի բանաստեղծուհու լաւագոյն արտադրութիւններից բերած բազմաթիւ փաստերով և ցուցմունքներով։ Credo-ն նեղութիւն չէ կրել հասկանալու ոչ մեր լուսաբանութիւնները և ոչ Ադա-Նեգրիի գրական դէմքը իր սեփական երկերից։ Նա ընտրել է աւելի դիւրին միջոց. դիմել է օտարազգի՝ իր համար անշուշտ շատ հեղինակաւոր, քննադատների ձևակերպումների օգնութեան,—նրանցը հակադրելով մերին։ Նախ ինչպէս է, որ «սպեցիֆիկներին» «Նացիոնալիզմի» մէջ կասկածող մեր «ղուտարին» «մարքսիստը» դիմել է բուրժուական մտածողների հեղինակութեան մի այնպիսի փափուկ հարցում, ինչպիսին է որեւէ գրողի իդէօլօգիական բնոյթը որոշելը։ Երկրորդ՝ նրա հակադրութիւնը վկայում է դժբաղդաբար, որ մեր անճարակ «քննադատը» չէ հասկացել նոյն իսկ իր հեղինակութիւններին։ Բրանդէսի համար Ադա-Նեգրին «սիրող, կռւող և հաւատացող երգչուհի է», Գեյզէի համար նա՝ «ուտօպիստ-սօցիալիստ է», իսկ Ֆրիտչէի կարծիքով «նրա լիրիքական բանաստեղծութիւնների մէջ դուք տեսնում էք պրօլետարական պօէզիայի էսքիզը»։ Երեք քննադատները, ինչպէս տեսնում էք, նոյնը չեն ասում, բայց նրանք երեքն էլ տարբերվում են մեզնից մի ընդհանուր կէտում. մենք մօտեցել ենք հարցին հասարակագիտական վերլուծութեան մեթօդով, քրքրելով երգիչ-իդէօլօգի մտահայեցողութեան դասակարգային գենեզիսը, մինչդեռ միւս քննադատները մօտեցել են հարցին գլխաւորապէս գեղարուեստական վերլուծութեան մեթօդով, բնորոշելով բանաստեղծուհու հիւսուածքների մօտիվները։ Այս մէկ։ Երկրորդ՝ մեր գեղարուեստական բնորոշումը՝ «աշխատանքի երգիչ», ոչ միայն չէ հակասում վերոյիշեալ օտար քննադատների ձևակերպումներին, այլ և այնքան ընդհանուր, ընդգրկող և պրեցիզ է, որ ամփոփում է իր մէջ նրանց երեքի յայտարարածները։ Մերը լայտ-մոտիվ է, որ կարմիր թելի նման անցնում է ամբողջ երկի միջով. նրանցը մասնաւոր մօտիվներ են, ստորաբաժանումներ։ «Աշխատանքի երգիչը» և՛ «սիրում» է, և՛ «կռւում», և՛ «հաւատում». նա ունի դրուագներ՝ «ուտօպիստ-սօցիալիստական» բնաւորութեամբ. վերջապէս նա, իբրև աշխատանքի (ֆիզիքական) երգիչ, տարակոյս չը կայ, ունի շատ նուագներ պրօլետարական պօէզիայից։

Ի հարկէ, մենք չենք մեղադրում Credo-ին, որ չէ կարողացել թափանցել մեթօդական նուրբ տարբերութիւնների խորքը. բայց իրաւունք ունենք պահանջելու, որ նա խոհեմութիւն ունենայ չը հասկացած խնդիրների մասին մեծ ապլոմբով չը բըրբըթելու։

Դատելն ու դատապարտելը աւելի հեշտ է, քան ըմբռնելն ու բացատրելը,—ասացինք մենք դեռ վերև։ B. Lucifer

(Կը շարունակվի)

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյնս հրամայված է արտակարգ հսկողութեան դրութիւնը Բագուի քաղաքապետութեան մէջ շարունակել մինչև սեպտեմբերի 4-ը։

Օգոստոս և սեպտեմբեր ամիսներին Պետերբուրգում կազմակերպվելու է միջազգային ինտենդանտական ցուցահանդէս։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Վերջին երկու ամիսներս տեղական «Астраханскій Листокъ» թերթի 12 համարներում զետեղված էին նկատողութիւններ կիրգիզ ծովահէնների յարձակումների մասին Կասպիական ծովում գտնվող ռուս ձկնորսների վրա և, ինչպէս պարզ կերպով մատնանշված են լրագրի յիշեալ համարների մէջ, համարեա բոլոր այդօրինակ դէպքերը տեղի են ունեցել Ուրալեան և Անդրկասպեան շրջանների՝ Մանգիշլակի և Գուրիեվի գաւառների սահմաններում։ Ինչ վերաբերում է մի քանի ուրիշ լրագիրների մէջ՝ ըստ երևոյթին, այդ յօդուածների հիման վրա՝ լոյս տեսած տեղեկութիւններին, թէ կիրգիզների վերոյիշեալ բռնութիւնները տեղի ունեն Աստրախանի նահանգում, բոլորովին սխալ է, որովհետև այս վերջինիս սահմաններում այդպիսի դէպքեր տեղի չեն ունեցել։ Աստրախանի նահանգապետ։

ԿԻԵՎ։ Զանազան տեղերից հաղորդում են Դնէպր գետի և նրա ճիւղերի ծանծաղուտ լինելու մասին։ Շատ շոգենաւեր են հանված ծանծաղուտի միջից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունիսի 2-ի գիշերը Լիգովսկայա փողոցի վրա № 74 տանը հրդեհ պատահեց։ Կրակն անցաւ հարևան շինութիւններին և Ռուբինշտէյնի փայտեղէնների պահեստին։ Վնասները խոշոր են։ Կան մարդկային զոհեր։

ՌՈՍՏՕՎ Դ/Վ։ Քաղաքային դուման 100,000 ր. յատկացրեց խոլերայի դէմ կռւելու համար։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Թիֆլիս, եղբ. Գաբրիէլեաններին.—Մտէք «Մշակի» խմբագրատուն և ստացէք ձեզ հասանելիք 5 օրինակ «Գեղունին»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿԱՊԵՏ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Ամառը գտնվում է ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ (Կովկաս. հանք. Ջրերում), որտեղ ընդունում է հիւանդներին մինչեւ սեպտեմբեր։ Верхній бульваръ, д. кн. Гирей.
(Ե. Հ. Կ.) 565. 0—9

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՊԵԱՏԻԳՕՐՍԿ,
ուր ամառը կընդունէ հիւանդներին։
Սիֆիլիս, միզասեռական և վեներական հիւանդութիւններ։
(Ե. Հ. Կ.) 955. 100—100



500 րուբլի պարգեւ
կը ստանայ իւրաքանչիւրը, ով կապացուցէ, որ ստորև յիշված 25 ՀԱՏ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ, ԱՐԺԷՔ., ՕԳՏԱԿԷՏ և ԱՌԱՆՁԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ չարժեն նրանց համար նշանակված առասպելական էժան գինը, այսինքն՝ 20 ՌՈՒԲ. ՓՈԽ. ՄԻԱՅՆ 5 Ր. 90 Կ.
ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ԵՒ ԿԸ ՀԱՄՈԶՎԷՔ!
1) Էլեգանտ, ամուր, գրպանի ժամաց. տղամ. համար, կամ կանանց ժամաց., բաց, անգլ. սև պողպատից, բարձր տեսակի, գեղ. օսխլդադրած, շատ ստտանկ ձևի, խիստ ուղղված ընթացքով։
2) Ամերիկ. նոր ոսկուց շղթայ տղամ. կամ կան. համար։
3—5) 3 հատ 84 յարգի արծաթից գեղ. բրէլօկներ՝ «Հաւատ, Յոյս և Սէր»։
6—12) ՆՈՐՈՒԹԻՒՆ! Կանացի գեղ. ննսեսսէր պլիւշից, մօդ. ձևով, բրօնզեայ արդուզարդով, ասեղնագործ. համար հետևեալ անհրաժեշտ առարկաներով. ա) մատնոց, բ) ոսկորէ կէս ասեղնագործելու համար, գ) ոսկորէ ասեղ ծակոտիների համար, դ) ոսկորէ ասղնատուփ, ե) մկրատ, զ) 3 կատուշկա մետաքսեայ թել՝ զանազան գոյների։
13) Կաշեայ պօրտմօնէ փողի համար 6 բաժ., արտաս. ամուր կաշուց, առանձ. բաժ. ոսկէ դրամի համար, մեխանիկ. փականով՝ պարունակելով իր մէջ կնիքի համար զաղտնի տեղ։
14) Կաուչուկէ կնիք պատուիրողի անուն-ազգանունով։
15) ՄԻ ՍՐՈՒԱԿ ԹԱՆԱՔ ԿՆԻՔԻ ՀԱՄԱՐ։
16) ԳՐՊԱՆԻ ԱՒՏՕՄԱՏ ՍԻՆՏՄԱՏՕԳՐԱՖ-ԲՐԷԼՕԿ կանացի հետաքրքր. 2 նկարով։
17—25) ԱՐԺԷՔ. և ՕԳՏ. ԸՆԾԱՅ. զարդիտուփ, որ պարունակում է (տես նկարը) ա) տղամ. մատանի «Դուբլէ», շքեղ շինուածք, պարզ. ձևի, կեղծ քարով, բ) նոյն տեսակ կանացի մատանի, գ) նոյն տեսակ բրոշ կեղծ քարերով և դ—թ) կանացի գլխի արդուզարդ բաղկացած փղոսկրեայ 6 սանրերից, ֆանտաստիկ շինուածք։ Այդ բոլոր պարանքներն ունենալով առաջին ձեռքից՝ մենք հնաւոր. ունենք բաց թողնելու թէ էժան և թէ լաւ միւսներից, և ի նկատի ունենալով խոշոր սպառումը՝ մենք նշանակել ենք անհամեմատ էժան գին—ՄԻԱՅՆ 5 ր. 90 կ.։ Տղամ. կամ կան. փակ ժամաց. 24 յաւելուածներով 6 ր. 90 կ.։ Ուղարկում ենք պատուէրը ստացած օրն եւեթ, վերադիր վճ. և առանց կանխավճ.։ Ժամաց. լաւ ընթացքի համար ուղարկ. ենք երաշխաւոր. 6 տարով։ Ճանապարհածախսը 50 կ., Միջին-Ասիա և Սիբիր—90 կ.։
Պահանջները խնդրում ենք հասցէագրել. ЭКСПОРТНОМУ ДОМУ
А. ВУЗЕЕРЪ, Варшава, Грибная ул. № 2—127.
Յ. Գ.—Բնավ հարկաւոր չէ, որովհետև չը հաւանած դէպքում փողը վերադարձնում ենք։
Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով։
(15,5,25,15) (В. 32500) 501. 4—2

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ամառը ընդունում է հիւանդներին ԿԻՍԼՕՎՕԴՍԿՈՒՄ (Կովկասեան հանքային Ջրերում), հիւրանոց «Ռոսսիա». յատկապէս միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։
(Օ. Մ.) 618. 10—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8
(Օ. Մ.) 564. 100—8

Հրաւէր

Կաթուղիկէ ս. Աստուածածին (Մէյդանի ս. Գէորգ) եկեղեցում նշանակված երկրորդ ծխական ժողովում ևս ընտրութիւն չը կայանալով, նշանակված է շարունակութիւն նոյն ժողովի յունիսի 6-ին, կիրակի, ժամը 12-ին, ընտրելու 2 ներկայացուցիչ (պատգամաւոր) և 2 անձնափոխանորդ (կանդիդատ), որոնք պիտի մասնակցեն Ներսիսեան դպրոցի հոգաբարձական և թեմական խորհրդի անդամների ընտրութեանը։ Ուստի հրաւիրում եմ յիշեալ եկեղեցու մեծ. պ.պ. ծխականներին շնորհ բերել եկեղեցի յիշեալ օրը և ժամին մասնակցելու ընտրութեան։

Ժողովին ներկայ կը լինի և մի ներկայացուցիչ սրբազան առաջնորդի կողմից։

Ստեփաննոս աւ.-ք. Սամուէլեանց

1—1

ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԱՊՐՈՒՍՏ
ԿԱՄ
ԿՈՂՄՆԱԿԻ ԵԿԱՄՈՒՏ
իւրաքանչիւր տան մէջ գտնվող անհրաժեշտ և արդիւնաբեր առարկայ հեշտ և հասարակ պատրաստելու միջոցով, ստանալով շատ աննշան գումար։ Առանձին գիտութիւն և մեծ շինութիւն չէ պահանջվում։ Պատկերազարդ նախագիծը՝ № 4 և պայմանները ՁՐԻ։ Հասցէն՝ И. Я. МАРКЪ. Либава, Курл. губ.
(Հ.) (В. 53687) 529. 6—4

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԳԵՆՏ
Մ. Ա. ԳԱԺՕՆԻԱՆ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է—уголъ Михайловской и Кирочной, отель „ИМПЕРІАЛЪ“.
(Ա. Օ.) 679. 5—3

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ բազմագոյն մեծադիր պատկերը Սանահնի դարաւոր վանքի սրբազան կամարների տակ՝ 3 ր.։
Նոյն պատկերը «ԱՂԲԻՒՐԻ» դպրոցական աշակերտ բաժանորդների համար ՄԷԿ Ր., ճանապարհածախսով 1 ր. 20 կ.։
Տասն օրինակը մի բաժանորդի հասցէով 10 ր.։
Վերադիր վճարով պատուէրներ առանց կանխավճարի չեն կատարվում և ծախս 30 կ. աւելի է հաշւվում իւրաքանչիւր պատուէրի համար։
Դիմել՝ ТИФЛИСЪ, Контора Редакціи „АГБЮРЪ-ТАРАЗЪ“.
(Հ.) 571. 0—5

ՀԻՊՆՕՏԻԶՄ



ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ
Հիպնօտիզմը բնական ձիրք չէ։ Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան։
◆
Հիպնօտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուտել խմելը։
Հիպնօտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլորութիւններն ու վատ բարքերը։
Հիպնօզական ցուցահանդէսները չափազանց զուարճալի են։
Սովորեցէք հիպնօզացնելու արուեստը։ Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ ազդեցիկ ուժի միջնորդութեամբ դարմանեցէք հիւանդութիւններ, տուէք ապշեցուցիչ ցուցահանդէսներ թատրոններում կամ մասնաւոր սրահներում և դարձէք պրօֆէսիօնալ հիպնօտիստ։
Սովորելու ծախքը շատ չնչին է։
Ստացէք իմ «Ինչպէս հիպնօտացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն Հիպնօտիզմի, Մեսմերիզմի, Հոգեբուժութեան, Ներշնչման, Հոգետեսութեան և Տելեպաթիի մասին։ Այս գրքոյկն ստանալու համար պիտի ուղարկել 10 կոպէկի նամականիշ ճանապարհածախսի համար։
ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ։ Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ։
Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 2030 Indiana Ave. Chicago, Ill. U. S. A.
(Ե. Հ.) 689. 100—1

Dr. Obermeyer's
Herba Seife

ՉԸ ԿԱՅ լաւագոյն միջոց բացի բժշկական խոշոր հեղինակաւոր անձերի կողմից յայտարարված անփոխարինելի և ԲՈՒՍԱԿԱՆ
ՍԱՊՈՆ „ԳԵՐԲԱ“
ԴՕԿՏ. ՕԲԵՐՄԷՅԵՐԻ
պեպենի, չոր եւ թաց քոսի, բշտիկների, պզուկների, քորի, քեփի եւ մորթու անմաքրութեան դէմ։
ՀԱԶԱՐԱՒՈՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ!!
Կարճատև գործածութիւնից յետոյ—լաւ աջողութիւն։
Ծախւում են դեղատներն եւ դեղագործ. խանութներ՝ փոքր կտորը 60 կոպէկով, իսկ մեծ կտորը 80 կոպ.։
ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Իսկականը միայն «ԳԹՈՒԹԵԱՆ ՔՈՅՐ» նկարով իւրաքանչիւր կտորի վրա։
Գեներալ ներկայացուցիչ ամբողջ Ռուսաստանի համար՝ Д. РОЗЕНТАЛЬ, ВАРШАВА.
(5,15,25) (В. 39510) 665. 18—1

XX դարի ամենախոշոր գիւտը
ԿԱՐԴԱՑԷՔ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ!

Треб. „НЕОФОНЪ“ искл. отъ
Торг. Дома
В. Эдель-штейнъ
Берлинъ.

Վերջին ժամանակների ամէն մի գիւտ աւելի կատարելագործվում է, յաւսնում և միջոցակէս հասնում այնպիսի մի կատարելութեան, որի մասին նոյնիսկ ամենահետաքրքիր ֆանտազիան երազել չէ կարող։ Գրամմոֆոնն, ի շարս այլ նոր գիւտերի, ունեցել է մի շարք փոփոխութիւններ, և ահէ առաջ ն գրամմոֆոնի երևան գալը ամբողջ աշխարհում պատմում է յաջողել՝ արձագանքելով մարդու ձայնը. հետևապէս վերջին գիւտը այդ շրջանում գերազանցում է ամեն մի սպասելիքի. այն է՝ երևան գալը ԱՆԽՕՂՈՎԱԿ, ԱՆՎՃԱՐ (ձայնատարուփ՝ նուագել առանց ասեղների) ԳՐԱՄՄՕՖՕՆ «ՆԷՕՖՕՆ» անունով, որ տանսոպվում է առաջներում եղած բոլոր գրամմոֆոններից նրանով, որ առանց խողովակի (րուպոր) արտադրում է դարմանալի բարձր, շատ նուրբ և բնական ձայներ—երգեր, խօսակցութիւններ, երաժշտութիւն, ամեն տես. երաժշտ. գործիքների նուագածութիւն (սօլօ) աշխարհի լաւագոյն արտիստների։
Ունկնդրելով մեր «ՆԷՕՖՕՆԻՆ», դուք եւ համոզվէք, որ ապարատ չէ ձեր մօտ, այլ արտիստն ինքն է ձեր աչքի առջեւ։ «ՆԷՕՖՕՆԸ», բացի իր գերազանց լինելուց ձայնատւութեան տեսակէտից, որ կարող է ամենածայր ճաշակին գոհացումն տալ, աչքի է ընկնում նաև իր գեղարուեստական արտաքինով իբրև զարդ սենեակի համար։
Ցանկանալով կարելիութիւն տալ Ռուսաստանի իւրաքանչիւր բնակչի օգտվելու գիւտից և տեխնիկայի վերջին գիւտից, մենք նշանակել ենք ամենամատչելի գին։ «ՆԷՕՖՕՆ № 1 ԿՈՐՊՈՒՍ» կարմրագոյն կաղնի փայտից, գեղանկարած, 42 սանտ. երկար., 36 ս. լայն. և 20 ս. բարձր., մետաղեայ փականով, գեղ. կարնիզով՝ ձեռագործ, կոլոնաձեւ շրջապատով, ՄԵԽԱՆԻԶՄԸ րեգուլեատորով, լարուածքի ընթացքը 3 մեծ պլաստինկաների համար, ուղիղ բանող եւ վշշոց չառաջացնող՝ այսպէս անուան. ֆիբերին յարմարւած. ունեցող անիւով, ԴԻՍԿԸ 25 ս. տրամէտրի, նիկելեայ, համարագրված եւ մահուդով ծածկված, ՏՕՆԱՐՄԸ նիկելազօծ, ՄԵՄԲՐԱՆԸ ամենալաւ կազմուածքով, երկ-կօնցերտային. ԳԻՆԸ՝ 20 ՎՃԱՐՈՂ 12 ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐՈՎ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒՈՎ, «Գրամմոֆոն» Ակց. Ընկ. (օպերաներ, երգեր, կուպլէտներ, երաժշտախումբ, լեհ. պարեր, վալսեր, մալօրօս. երգեր եւ այլն) ԵՒ 3000 ԿՕՆՑԵՐՏ. ԱՄԵՆԸՆԴՕՂ—20 Ր. 50 Կ.։ Ծրօբինակ «ՆԷՕՖՕՆ № 2» կաղնի փայտից, մեծ դիրքով, աւելի գեղարուեստագործ, 16 ՊԻԷՍՆԵՐՈՎ և 4000 ԿՕՆՑ. ԱՄԵՂՆ.—ԳԻՆԸ 28 Ր. 50 Կ.։ Ճանապարհածախսի եւ մաքսի համար հաշւվում է Եւրոպ. Ռուսաստան եւ Կովկաս—2 ր. 90 կ., Ասիական Ռուսաստան—3 ր. 75 կ., Արևելեան Սիբիր—4 ր. 50 կ.։ Պատուէրներն ուղարկվում են վերադիր վճ., առանց կանխավճարի։ Հասցէն, որ կարելի է կարել եւ կպցնել ծրարին։
W. EDELSTEIN, BERLIN, Kantstrasse 78—68.
Торг. Домъ В. ЭДЕЛЬШТЕЙНЪ, БЕРЛИНЪ, ул. Кантъ. 78—68.
Պատուէրները կարելի է գրել ռուսերէն լեզուով։ Բերլին նամակ ուղարկելուց պէտք է կպցնել՝ փոստ նամակին 10 կ. մարկա, իսկ բացիկին 4 կ.։
(27, 5) (В. 37211) 614. 2—2

Դէպօ էլեքտր. եւ կերօսինային լամպաների, պաստառների եւ կահ-կարասիքի
Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ
Թիֆլիս, Դվորցովայա փողոց։ Ֆիրման գոյութիւն ունի 1869 թւից։
Անմիջական յարաբերութեան մէջ լինելով ՊԱՍՏԱՌՆԵՐ (обои) արդիւնաբերող առաջնակարգ ֆիրմաների հետ, ունենալով միաժամանակ բազմամեայ փորձառութիւն յատկապէս պաստառներ վաճառելու գործում և լաւապէս իրազեկ լինելով այդ մասը, կարելիութիւն ունենալով ամեն մի դէպքում ՄՐՑԵԼ պաստառներ ունեցող ուրիշ բոլոր ֆաբրիկանտների եւ պահեստների հետ—առաջարկում ենք ամենալաւագոյն ՊԱՍՏԱՌՆԵՐ իր բոլոր պատկանելիքներով, ամեն տեսակ նորագոյն նկարներով, որոնք կարող են բաւականութիւն տալ թէ իրանց յատկութեան և թէ մրցութիւնից դուրս ունեցած գների կողմից պ. պ. գնողների պահանջներին ու ճաշակին։
Հասարակութեան, հիմնարկութիւնների և ընդհանրապէս օտար քաղաքների պ. պ. պատուիրողների յարմարութեան համար մենք պարբերաբար թողնում ենք նոր ստացված պաստառների նմուշների ալբոմ։ Ալբոմներն ուղարկվում են ըստ առաջին պահանջման։
ԴԵՊՕՅԻՆ ԿԻՑ ՄՇՏԱՊԷՍ ՈՒՆԵՆՔ
I. ՊԱՍՏԱՌՆԵՐ առաջնակարգ ֆաբրիկաների, ինչպէս արտասահմանեան՝ նոյնպէս և ռուսական, վերջին նորագոյն ամեն ձևի նկարներով։
II. ՀԱՇՒԵՑՈՅՑՆԵՐ էլեկտրականութեան համար, Էրիման յայտնի ֆաբրիկայի, թոյլատրված չափերի և կէտերի գլխաւոր պալատի կողմից։
III. «ՍԻՐԻՈՒՍ» ԼԱՄՊՕՉԿԱՆԵՐ էլեկտր. համար, որ տնտեսում է 70% և որի միակ ներկայացուցիչը համարվում ենք մենք։
IV. ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ էլեկտրական արմատուրների և նիւթեղէնների՝ սարքաւորելու համար։
V. ԿԵՐՕՍԻՆՕ-ԿԱԼԻԼԱՅԻՆ ԼԱՊՏԵՐՆԵՐ կատարելագործված սիստեմի՝ ինչպէս արտաքին, նոյնպէս և ներքին լուսաւորութեան համար։
VI. ԽՈՀԱՆՈՑ սպիրտի «ԻՖԱԿ») ԳԻՐՇԳՈՐՆ յայտնի ֆաբրիկայի։
» կերօսինի «ՉԵՄՊԻՕՆ»)
VII. ՊԱՀԵՍՏ վիէննական կահ-կարասիքի։
Ընդունվում են պատուէրներ էլեկտրական գծեր անցկացնելու և էլեկտր. լուսաւորութեան վերաբերեալ սարքաւորումն մտցնելու բնակարաններում, խանութներում, հիմնարկութիւններում, գործարաններում և այլն։ ՕՏԱՐ ՔԱՂԱՔՆԵՐԻՑ ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ կատարվում են շուտափոյթ և ճիշդ կերպով։
(Ն. Հ.) 540. 5—5

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ
„ՆԱՐԶԱՆ“ „ԷՍՍԵՆՏՈՒԿ №20“
Ատ. և Ա. Մ.
Պահանջեցէք ամենուրէք!
Բուժիչ { ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ (աղի-ալկալեան) №№ 4. 4 նոր, 6. 17. 18. 18 բիւվ. 2. 19։ ԲԱՏԱԼԻՆԵԱՆ (անփոխարինելի լուծողական)։ ՍՄԻՐՆՕՎԵԱՆ-ԵՐԿԱԹԱՅԻՆ (պարունակում է մկնդեղ)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԼԻՊԵՇԿԱՆԵՐ (վերացնում է տապը)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԱՂ (փոխարինում է № 17 ջրին)։ ՀԵՂՈՒԿ ԱԾԽԱԹԹՈՒ, միանգամայն մաքուր, ստացված հիւլօվօդսկի «Նարզանից»։
ՋՐԵՐԻ ԵՒ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԻՆ—ТИФЛИСЪ, Гановская, № 10.
Ածխաթթուի պատուէրների և մանրամասն նկարագրութիւնների ու պրէյս-կուրանտների համար դիմել՝ Пятигорскъ, Управленіе водъ.
(5, 12) (М. 185259) 667. 2—1

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.